

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռեզումեական գործողությունները Կովկասյան ճակատում
1914 թ. հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը

Տեսք 3: 1915 թ. հունիսի 10-ից մինչև հուլիս 10-ը*

Քանակի բառեր - Թովմաս Նազարբեկյան, Ն. Յուդենիչ,
բժիշկ Տեր-Թովմասյան, Արամ Մանուկյան, Նարեկավանք,
Անդրանիկ, Դրո, Համազասպ, Քեռի, Վան, Մուշ, Կոփ:

1915 թ. մայիսին Կովկասյան բանակի հրամանատարությունը որոշում է ակտիվացնել մարտական գործողությունները, որովհետև դաշնակիցները՝ անգլո-ֆրանսիական զորքերն ու նավատորմը, 1915 թ. փետրվարից լայնածավալ ռազմարշավ էին նախաձեռնել Դարդանեղի շրջանում, իսկ օսմանյան հրամանատարությունը ուժերի մեծ մասը կենտրոնացրել էր նեղուցները և մայրաքաղաքը պաշտպանելու համար¹:

Կովկասյան բանակի հրամանատարությունը ցանկանում էր օգտվել ստեղծված իրադրությունից և առաջանալով գրավել օսմանյան 3-րդ բանակի գլխավոր ռազմակայան Էրզրումը: Ուստի կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Օգանովսկին 1915 թ. հունիսին կարգադրում է գեներալ Թ. Նազարբեկյանին Հյուսիսային Պարսկաստանից անցնել Արևմտյան Հայաստան՝ Վան:

Ջորավարն իր հուշերում մանրամասն նկարագրում է զորամասի անցած ճանապարհը և բավականին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում իր տեսած բնակավայրերի մասին: Թ. Նազարբեկյանը ականատես է լինում Ջևղեթ բեյի ղեկավարության տակ գտնվող թուրքերից և քրդերից կազմված ավազակախմբերի և կանոնավոր ստորաբաժանումների ոճրագործություններին՝ հայերի զանգվածային սպանություններին ու բնակավայրերի ավերմանը:

*Ընդունվել է տպագրության 20.07.2019:

1 Տե՛ս Корсун Н. Г., Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, М., 1940, էջ 28:

1915 թ. հունիսի 14-ին Թ. Նազարբեկյանի Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադը բանակում է Վանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կուռուբաշ գյուղում: Գեներալը, օգտագործելով հարմար պահը, գալիս է Վան և առաջին հերթին ցանկանում է հանդիպել Վանի նահանգապետ, քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպիչ Արամ Մանուկյանի հետ, սակայն սուղ ժամանակի պատճառով դա չի հաջողվում, քանի որ նահանգապետը գործերի բերումով բացակայում էր քաղաքից: Թ. Նազարբեկյանը ծանոթանում է նահանգապետարանի պատասխանատու աշխատակից Պարույր Լևոնյանի հետ, ապա որքան ներում է ժամանակը, շրջում է Վանի Այգեստան թաղամասով: Գեներալը հիացմունքով է նկարագրում Վանը և հատկապես բուսականության մեջ թաղված Այգեստանը: Նրա կարծիքով՝ Վանը եվրոպական քաղաք էր, սակայն շատ էր տուժել ապրիլ-մայիսյան ինքնապաշտպանական կռիվների ժամանակ:

Երեկոյան բրիգադի գիշերակացում գեներալին են այցելում քաղաքի ներկայացուցիչները, որոնց հետաքրքրում էր, թե ինչպես են ընթանալու հետագա իրադարձությունները, արդյո՞ք իրադրությունը կայուն է, թե՞ ոչ: Հավանաբար վանեցիներին հուզում էր այն հարցը, թե չի՞ կրկնվի արդյոք ռուսական զորքերի՝ 1914 թ. դեկտեմբերյան նահանջը, որի հետևանքով Ատրպատականի հայ և ասորի բնակչությունը ահռելի մարդկային ու նյութական կորուստներ ունեցավ: Թ. Նազարբեկյանը խորհուրդ է տալիս ապավինել միայն սեփական ուժերին, քանի որ քաջ գիտեր, որ Կովկասյան բանակի հրամանատարությունը, գրավելով մեծ տարածքներ, չէր կարողանում ապահովել դրանց թիկունքի պաշտպանությունը և նյութատեխնիկական ապահովումը: Այս ամենի պատճառներից մեկն այն էր, որ ռուսական գլխավոր հրամանատարությունը ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաբեմը համարում էր երկրորդական և համաշխարհային պատերազմում վճռական դեր չունեցող, չնայած որ թուրքական հրամանատարությունը ևս մտադրություն չունեի ձեռնարկել ակտիվ մարտական գործողություններ²:

Նման իրողության վկայությունն էր զորավարի այն դիտարկումը, որ ռուսական զորքերը ժամանակին չէին ապահովվում պարենով ու զինամթերքով, որի հետևանքով առաջխաղացումը դանդաղում էր, և երբեմն էլ ստիպված էին լինում հրաժարվել ակտիվ մարտական գործողություններից: Այսպես, այդ օրերին Թ. Նազարբեկյանի զորաջոկատի առաջախաղացումը հնարավոր չի լինում, քանի որ զորամասում նույնիսկ հաց չկար³: Եվ դա այն դեպքում, երբ Վանի նահանգում կար հացահատիկի առատ բերք և աշխատուժ, որը կարող էր ապահովել ոչ միայն բնակչությանը, այլև ռուսական բանակին: Ցավոք, տեղի ռուսական հրամանատարությունը զանազան արգելքներ էր հարուցում և թույլ չէր տալիս, որ Վանի հայկական իշխանությունը լիարժեքորեն իրականացնի հացահատիկի բերքահավաքը:

2 Նշենք, որ գեներալ Ն. Կորսունը, իդում անելով օսմանյան 3-րդ բանակային կորպուսի շտաբի պետ, գերմանական բանակի մայոր Ֆ. Գուգելի հուշերին, գալիս է այն եզրակացությանը, որ 1915 թ. առաջին կեսին թուրքերը պատրաստ չէին ակտիվ մարտական գործողություններ վարելուն: Տե՛ս Кореун Н. Г., Алашкертская и Хамаданская операции, էջ 22:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 51:

Ռուսները նորից սկսել էին համագործակցության եզրեր փնտրել քրդերի հետ՝ փորձելով սիրաշահել և իրենց կողմը գրավել նրանց, չնայած այն հանգամանքին, որ քրդերը թուրքերի կողմից ակտիվորեն մասնակցում էին մարտական գործողություններին, հարձակումներ գործում ռուսական զորամասերի թիկունքային ստորաբաժանումների, գլխավորապես՝ կապավորների վրա: Նշենք, որ ռուս-թուրքական բոլոր պատերազմների ընթացքում ռուսներին այդպես էլ չհաջողվեց իրենց կողմը գրավել քրդական ցեղերին, սակայն ցարական իշխանությունները շարունակում էին սին հույսեր տաձել, որ հնարավոր կլինի, հանձնիս քրդերի, ունենալ «հավատարիմ» դաշնակիցներ:

Քրդերի պաշտպանության ջատագով էր դարձել անգամ ռուս նշանավոր գրող Լև Տոլստոյի կրտսեր դուստրը՝ Ալեքսանդրան, որն այդ ժամանակ որպես գթության քույր ծառայում էր Վանում տեղակայված «Համառուսաստանյան քաղաքների միության» լազարեթում⁴: Տիկինը հասցրեց անգամ ռուսական մամուլում «արժանահավատ» լուրեր տպագրել Վանի հայերի «գազանությունների» մասին:

Թ. Նազարբեկյանն իր հուշերում պարբերաբար անդրադառնում է հայ կամավորական շարժմանը: Նա հիշատակում է, որ հրամանատարության կարգադրությամբ Պարսկաստանից Վան է գալիս Անդրանիկի Հայկական 1-ին կամավորական խումբը և 1915 թ. հունիսի 14-ին համալրում է գեներալ Իվան Տրուխինի ջոկատը, որի կազմում էին Հայկական 2-րդ, 3-րդ և 4-րդ խմբերը⁵: Այստեղ Թ. Նազարբեկյանը վկայակոչում է իր ենթակայության տակ գտնվող սահմանապահ զումարտակի հրամանատար, գնդապետ Ուշակովի կողմից մի շարք զինվորականներին, այդ թվում՝ հայկական կամավորական խմբերի հրամանատարներին տրված դիպուկ գնահատականները: Կարելի է ենթադրել, որ հայ գեներալն ընդհանուր առմամբ համաձայն է ռուս գնդապետի գնահատականներին, ուստի խուսափում է իր կողմից որևէ միջամտությունից:

Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի զորամասերը առաջանալով հասնում են Արճեշ: Թ. Նազարբեկյանը ցավով փաստում է, որ ճանապարհին հանդիպած գրեթե բոլոր հայկական շեներն ավերված էին: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Օգանովսկին ծրագրել էր 1915 թ. հունիսի 29-ին հարձակում նախաձեռնել Կոփի շրջանում գտնվող թշնամու վրա և դուրս մղել նրան, սակայն ռուսական զորքերի առաջին գրոհն ավարտվում է անհաջողությամբ: Հունիսի 30-ին հարձակումը վերսկսվում է նոր թափով: Թ. Նազարբեկյանի գլխավորած զորամասերը, հաջողությամբ հաղթահարելով կտրտված լեռնային տեղան-

4 Տե՛ս **Սահակյան Ռ.**, Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8-հուլիսի 17), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2008, էջ 31, թիվ 91-րդ ժամագրությունը:

5 Տե՛ս **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте 1914-1917, Париж, 1933, էջ 170, տե՛ս նաև՝ **Allen W. E. D., Muratoff P.**, Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921. Cambridge, 1953, էջ 310: Գեներալ Ի. Տրուխինի ջոկատը կազմված էր մեկ զումարտակից, հայկական 4 դրուժինաներից, 12 հարյուրյակից և 12 թնդանոթից, տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции, էջ 69:

քը, կարողանում են ընդհուպ մոտենալ թուրքական դիրքերին: Հաջողությանը մեծապես նպաստում է ռուսական հրետանու դիպուկ կրակը, որը վերջնականապես ամրագրեց ռուսների հաղթանակը:

1915 թ. հուլիսի 3-ին ռուսական ուժերը սկսում են հարձակումը Մշո դաշտի ուղղությամբ: Դժվարությամբ ձեռք բերված Կոփի հաղթանակը նրանց հնարավորություն է տալիս զարգացնելու հետագա առաջխաղացումը: Սկզբում Թ. Նազարբեկյանը հրաման է ստանում առաջանալ դեպի Մուշ: Գործողությունը պետք է իրականացվեր գեներալ Գ. Շարպանտյեյի ջոկատի հետ միասին (Կովկասյան կազակային դիվիզիա, որը բաղկացած էր 24 հեծելավաշտերից, Անդրբայկալյան 2-րդ և 3-րդ կազակային բրիգադներից և 36 թնդանոթներից)⁶, բայց, տարօրինակ կերպով, այդ զորամասի հետ հնարավոր չի լինում կապ հաստատել: Իսկ քիչ անց՝ 1915 թ. հուլիսի 8-ին Թ. Նազարբեկյանը հրաման է ստանում նահանջել: Այդ առիթով նա ցավով գրում է, որ կրկնվում էր 1914 թ. դեկտեմբերյան նահանջի ահավոր պատկերը. կրկին մեծ թվով հայ փախստականներ՝ կանայք, երեխաներ ու ծերեր, ստիպված են լինում լքել բնակավայրերը և ամառային տապին ուղքով հետևել զորքին: Չինվորները, չնայած հոգնածությանը, իրենց ուսերի վրա տանում էին փոքրահասակ երեխաներին: Այս նահանջը ճակատագրական եղավ Տարոնի հայության համար, որն այդ օրերին օրհասական կռիվներ էր մղում Մշո դաշտի գյուղերը բնակիչների հետ միասին ողջակիզող թուրքական զորքերի դեմ: Դրան զուգահեռ՝ տեղահանվեց նաև նոր ազատագրված Վանի հայությունը: Արևմտյան Հայաստանը հայաթափվում էր իր դաժանությամբ անօրինակ՝ երկկողմ դավի արդյունքում:

Թ. Նազարբեկյանը վկայում է, որ այդ օրերին անընդհատ լուրեր էին տարածվում հակառակորդի գերակշիռ ուժերի հարձակման մասին, սակայն դրանց վերաբերյալ բացակայում էին արժանահավատ և վստահելի աղբյուրները⁷:

Փորձելով ապագա սերունդների համար բացահայտել ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան նահանջի խորքային պատճառները՝ Թ. Նազարբեկյանը ներկայացնում է Կոփի հաղթանակից հետո իր գլխավորած զորամասի տարօրինակ նահանջի անմիջական շարժառիթը: Նրան այդ քայլին էր դրդել Լաբինսկյան կազակային գնդի հրամանատար, գլխավոր շտաբի սպա, գնդապետ Ալեքսանդր Նոսկովի հանձնարարությամբ Մշո դաշտում կազմված կեղծ բովանդակությամբ զեկուցագիրը: Դա որոշակի լույս է սփռում Տարոնի հայության բնաջնջումը չկանխելու և ապա՝ Վասպուրականի 1915 թ. հուլիսյան նահանջը հրահրելու իրական պատճառների վրա: Պարզվում է, որ ցարական հրամանատարությունը իր Գլխավոր շտաբի սպայի միջոցով գտել էր հայազգի գեներալին խաբելու և նրա գլխավորած զորամասը նահանջի դրդելու տարբերակը՝ հորինելով 2-րդ հրաձգային բրիգադի դեմ իբր գործող թուրքական բանակի 12 թա-

6 Տե՛ս Կореун Н. Г., Алашкертская и Хамаданская операции, էջ 51:

7 Գեներալ Ն. Կորսունն իր հետազոտությունում մշում է, որ Ադրդուլ Քերիմ փաշայի գլխավորությամբ հարվածային խմբավորումն իբր՝ կազմված էր 89 զումարտակից Տե՛ս Կореун Н. Г., Первая мировая война на Кавказском фронте, оперативно-стратегический очерк, М., 1946, էջ 43:

բուրների մասին առասպելը: Ոչ միայն Առաջին աշխարհամարտի, այլև հայ-ռուսական հարաբերությունների ողջ պատմության այս ամոթալի էջի մասին դառը խոհերը Թ. Նազարբեկյանը շարունակել է նաև իր հուշերի հաջորդ տետրում:

Մեր միջամտությունները կատարվել են ուղղագիծ փակագծերով: Տողատակում առկա ծանոթագրությունները մերն են:

Ռուբեն Օ. Սահակյան

Պատմ. գիտ. դոկտոր

ՏԵՏՐ 3

29 նոյեմբերի 1928 թ.

Թիֆլիս

[1915 թ.] հունիսի 10-ին ջոկատի հետ միասին ես շարժվեցի ք. Վան Չուխ-Գյադուկի լեռնանցքով: Այն է՝ Կովկասյան 5-րդ, 6-րդ և 7-րդ գնդերով (7-րդ գունդը 2 գումարտակային կազմով էր), Կովկասյան հրաձգային դիվիզիոնի 1-ին և 2-րդ մարտկոցներով, վիրակապման լազարեթով, շարժապահեստներով և այլ փոքր զորամասերով: Բրիգադն անցավ ք. Կոփի⁸ դեմ գործող Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի Մանազկերտի ջոկատի կազմի մեջ:

Այդպիսով, ես ընդմիջտ հրաժեշտ տվեցի Պարսկաստանին և պարսկական ռազմաճակատին: Ցավալի էր լքել և՛ մեկը, և՛ մյուսը: 7 ամսից ավելի ես ուսումնասիրեցի տեղանքը և այնտեղ գործող հակառակորդին: Պարսիկ ժողովուրդն իր կենցաղավարությամբ ինձ շատ էր դուր եկել: Պարսիկները, ի տարբերություն ասիական մյուս ժողովուրդների, համեստ են, և ինձ հատկապես զարմացնում էին նրանց ազնվությունը և անշահախնդրությունը: Նրանց շրջանում գողությունը հազվադեպ էր: Առևտրականը տուն ճաշի գնալիս չէր կողպում իր կրպակը, այլ նրա երկայնքով թել կամ բարակ պարան էր ձգում: Դա ցույց էր տալիս, որ տերը բացակայում է, և առևտուրը կարճ ժամանակով դադարեցված է. տերը գիտեր, որ իր բացակայության ժամանակ ոչինչ չի կորչի: Անշուշտ, մեր զորքի գալուց հետո այդ համոզվածությունը սխալ դուրս եկավ: Դիվանը գրավելուց հետո, երբ կրպակները բացվեցին, ես որոշ գնումներ կատարեցի, և ինձ ապշեցրին նույնիսկ Թիֆլիսի համեմատ ցածր գները, իմիջիայլոց, առևտրականները կարող էին օգտվել առիթից և բարձրացնել գները, ինչպես սովորաբար տեղի էր ունենում ամենուր:

Առաջին գիշերակացը Մալկով գյուղում էր: Անցումը կարճ էր, իսկ ճանապարհը՝ տանելի: Հաջորդ օրը, այսինքն՝ հունիսի 11-ին, ես ջոկատի հետ ճանապարհ ընկա: Ծանապարհը վատ էր, որի որոշ հատվածներ ստիպված էինք կարգի բերել անվավոր գումակի համար, իսկ որոշ հատվածներում, չնայած հունիս ամիսն էր, ծյուն կար: Չնայած նրան, որ ք. Բաշկալեն գտնվում է 8000 ֆութ բարձրության վրա, սակայն բոլորի համար վերելքն այնքան էլ դյուրին չէր: Ծանապարհը հսկող ստորաբաժանումները քրդերի հետ

⁸ Կոփը Բուլանուխի խոշոր գյուղերից էր:

կարճատև փոխիրաձգություն էին վարում: Չնայած այն հանգամանքին, որ մենք լեռնանցքում գտնվում էինք ժամը 2-ի մոտակայքում, ցուրտը զգացնել էր տալիս:

Հաջորդ գիշերակացը Խան գյուղում էր: Այդ գյուղը գտնվում էր Չուխ Գյաղուկ լեռնանցքի գաղիվայրի հետևում և անմարդաբնակ էր, ինչը ձեռնառու էր մեր զինվորներին, քանի որ վառելիք ընդհանրապես չկար: Զինվորները, չնայած [գյուղում] առկա վառելիքին, սկսեցին կտրել թուրքական հեռագրասյունները, ինչն արգելելու համար ստիպված էի գրեթե յուրաքանչյուր սյան մոտ ժամապահ կարգել: Մեր զինվորները շատ վատ սովորություն ունեն` ամեն ինչ ոչնչացնել ու քանդել, ինչի համար իրենց հաշիվ չեն տալիս: Դա ես նկատել էի, դեռևս երբ մասնակցում էի ճապոնական պատերազմին⁹:

Հաջորդ անցումը կատարվեց մինչև Խոշաբ: Մենք բանակեցինք հին ամրոցի անմիջական հարևանությամբ: Այնտեղ կային նաև բնակելի շինություններ, որոնք բոլորն էլ դատարկ էին: Այդ գյուղում կա բարձր ժայռ, որը հարավից գաղիվեր էր ու դժվարամատչելի: Ժայռի վրա կառուցվել էր հրակնատներով ամրոց, [որն ուներ] հաղորդակցության ուղիներ, խորը փոսեր ու բարձր պատ: Ամրոցը ճանապարհից շատ լավ էր երևում: Սպաները գնացին ամրոցը ուսումնասիրելու: Ամրոցի դռները հաստ երկաթից էին: Դռնից ձախ գտնվում էին երկու ջրհորները: Առաջին պատը շատ բարձր էր: Արահետով մտնելով ամրոցի ներսը` մոտենում ես նման բարձրություն ունեցող այլ պատի: Ամրոցի ներքևում կային բնակելի շինություններ` զորանոցներ: Այդ բոլոր կառույցները հյուսիս-արևելյան կողմից շրջապատված էին կավե պատով, որոնց գագաթները իրենցից սուր անկյուններ էին ներկայացնում: Պատերի հատման 2 մասերում կային մեծ հրակնատներ, որոնք կրակի տակ էին պահում պատերի երկայնքով գտնվող տարածքը: Ամրոցից հրաշալի տեսարան էր բացվում երեք կիրճերի վրա: Ժամանակի ընթացքում ամրոցը փոքրինչ քանդվել էր, սակայն որոշ հատվածներ ամբողջությամբ պահպանվել էին:

Այստեղ ես տեղեկացա, որ Վանա լճի հարավային ափին կուտակված թուրքերը փորձում են անցնել հարձակման, ուստի մեր առջևում ընթացող պլաստունյան բրիգադին հրամայվեց շտապ գնալ Վան, իսկ ջրկատին` առանց հանգստանալու առաջանալ: 9800 ֆուրթից [բարձրությունից] իջնելով 7150 [ֆուրթ]` մենք զգացինք շոգը և հեղձուցիչ օդը: Հաջորդ անցումը մինչև Զեռնակ գյուղն էր: Ծանապարհը փոշոտ էր, և սաստիկ տոթ էր: Ծանապարհին կային մարդկանց մեծ թվով այլանդակված դիակներ, ինչպես նաև [սաստկած] ձիեր, որոնք սարսափելի գարշահոտություն էին տարածում: Դրանք բոլորը քրդերի և Ջևղեթ փաշայի¹⁰ ջրկատի կողմից տանջամահ արված հայերն էին:

Հաջորդ օրը, այսինքն` հունիսի 14-ին, մեր ջրկատը մոտեցավ Վանին: Ես [ջրկատը] գիշերակացի տեղավորեցի Վանից մի քանի վերստի վրա գտնվող Կուրաբաշ¹¹ գյուղի մոտ, իսկ ինքս շտաբի պետի հետ գնացի քաղաք` Վան քաղաքի կայազորի պետ, գեներալ-մայոր Նիկոլասին ներկայանալու համար: Նա ինձ և շտաբի պետին ճաշի հրավիրեց: Ծաշից հետո ես երկար ժամանակ մնացի` զրուցելով տանտերերի [գեներալ Նիկոլասի և շտաբայինների] հետ, կիսվելով տպավորություններով: Երբ մենք վերադարձանք գիշերակացի վայրը, արդեն մթնել էր, ուստի ես հնարավորություն չունեցա դիտել քաղաքը:

Հաջորդ օրը գնացի քաղաք` հանդիպելու կորպուսի շտաբի պետ, գեներալ Ռյաբին-կինի¹² հետ, որն այդ ժամանակ ծառայության հետ կապված գործերով եկել էր Վան` հանդիպելու պաշտոնական անձանց և դիտելու քաղաքը: Ռյաբինկինը կանգ էր առել

9 Նկատի ունի 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը:

10 Բեյ:

11 Կուրուբաշ:

12 Ռյաբինկին Ֆյոդոր Տիմոֆեյի (1859-?), գեներալ-լեյտենանտ, Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբի պետ:

հարուստ հայի պատկանող 2 հարկանի տանը: Նրա սենյակների կահավորանքը եվրոպական էր, իսկ կահույքը շատ լավն էր: Այնտեղից ես միայնակ քաղաք գնացի. ցանկանում էի բաղնիքում լողանալ: Քայլելով գլխավոր փողոցով՝ ես հանդիպեցի Հայկական 1-ին դրուժինայի բժիշկ Տեր-Թովմասյանին: Նրան հարցրի առաջին դրուժինայի մասին, խնդրեցի որպես քաղաքն ինձնից ավելի լավ իմացող լինել իմ ուղեվարը: Նա հաճույքով համաձայնեց: Խնդրեցի առաջին հերթին բաղնիք տանել: Բաղնիքը գտնվում էր գլխավոր փողոցում: Գալով բաղնիք՝ ես տիրոջը դիմեցի հարցով. «Կարո՞ղ եմ լողանալ»: Նա բավականին ոչ բարեկամաբար ընդունեց և ինձ ասաց, որ բաղնիքը չի աշխատում: Դրան ես պատասխանեցի, որ լավ է, որ չի աշխատում, ծայրահեղ դեպքում կխուսափեմ մրսելուց և սկսեցի դուրս գալ բակից: Տերը կանգնեցրեց բժշկին և հարցրեց, թե ես ով եմ, և երբ նա հայտնեց իմ անունը, տերը վազեց իմ հետևից, հասնելով ինձ՝ առաջարկեց բաղնիք [լողանալ], սակայն ես, շնորհակալություն հայտնելով նրա սիրալիրության համար, հրաժարվեցի նրա առաջարկից: Ապա նա ինձ օշարակ առաջարկեց, սակայն ես դրանից էլ հրաժարվեցի: Նա սաստիկ շփոթված էր և հեռացավ գլուխը կախ:

Ապա ես խնդրեցի Տեր-Թովմասյանին ինձ ցույց տալ նահանգապետ Արամ փաշայի (այդպես էին նրան անվանում) բնակարանը, ցավոք նա քաղաքում չէր: Նա մեկնել էր ծառայողական գործերով: Ծանոթացա նրա տեղակալ Պարոյր Լևոնյանի¹³ հետ, ապա գնացի քաղաքապետարան, որտեղ հանդիպեցի քաղաքի ներկայացուցչին: Զրուցեցի մոտ կես ժամ, որից հետո գնացի քաղաքը դիտելու, շրջեցի մի քանի փողոց: Ցավոք, հնարավորություն չունեցա այն [Վանը] մանրամասնորեն դիտելու: Քաղաքի տեսքը շատ գրավիչ է ու մաքուր: Նա ամբողջությամբ կանաչի մեջ է և հաճելի տապավորություն է թողնում: Փողոցները բավականին լայն էին (իհարկե, կային նաև նեղ ու ծուռ [փողոցներ]): Գլխավոր փողոցը սկսում է լճին չհասած և ափին ուղղահայաց ձգվում է 4 վերստ արևելք: Փողոցների եզերքներին տնկված էին ծառեր: Կար մեծ շուկա: Գլխավոր փողոցի վրա գտնվում էին հյուրանոցը և ֆրանսիական հյուպատոսարանը, և այստեղ տները քիչ թե շատ կանգուն էին: Փոխարենը քաղաքի ծայրամասերում շինությունները հրդեհված էին ու քանդված: Ոչ մի կանգուն տուն չէր մնացել հատկապես թուրքական հատվածում: Կային շատ լավ ու մեծ տներ, կարծես դրանք թուրքական մասում էին: Սակայն այդ բոլոր տներից մնացել էին կիսավեր պատեր, իսկ փայտյա մասերը հրդեհվել էին: Ափից ոչ հեռու վեր էր խոյանում հնագույն ամրոց (կան սեպագիր արձանագրություններ)¹⁴, որտեղ կային թուրքական հին տեսակի թնդանոթներ: Խանութներում ամենի վրա գներն այն աստիճան չափից շատ էին բարձրացված, որը բոլոր գնորդներին անչափ վրդովեցնում էր:

Գիշերակաց ես վերադարձա երեկոյան մոտ ժամը 5-ին: Սկսեց սաստիկ անձրև: Մեր վրանները ջրածածկ եղան ու շատ իրեր փչացան: Գիշերակացի վայրը անհաջող էր ընտրված: Երկու ժամ անց [եղանակը] պարզվեց, և արև երևաց: Դրանից հետո ինձ այ-

13 **Լևոնյան Պարոյր** (1884-1933, գուսան Ջիվանիի որդին), մասնագիտությամբ իրավաբան, հասարակական, քաղաքական և պետական գործիչ, ՀՅԴ անդամ, իսկ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ Սոցիալիստ-հեղափոխական (Էսեռ): Հայկական 2-րդ կամավորական խմբի հրամանատարի համարգ, 1915 թ. մայիսի 10-ից մինչև հուլիսի կեսերը՝ Վանի նահանգապետի տեղակալ, 1917 թ.՝ Կովկասյան ռազմաճակատի ռազմական կոմիսարի տեղակալ, 1918 թ. Անդրկովկասյան սեյմի անդամ, 1919 թ.՝ ՀՀ ապահովության խորհրդի փոխնախագահ, Արարատյան նահանգի նահանգապետի պաշտոնակատար՝ 1919 թ., 1919-1920 թթ.՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ:

14 «Միերի դուռ» կամ «Աքռավու քար», սրբազան քարածայռ Վանի բերդի մոտ: Փորագրված են Վանի (Ուրարտու) թագավորության արքաներ Իշպուլինիի (մ. թ.ա 825-810) և Մենուայի (մ. թ. ա. 810-786) սեպագիր արձանագրությունները: Ըստ ավանդության՝ այստեղ է փակված «Սասան ծներ» դյուցազներգության վերջին հերոսը՝ աշխարհի անարդարություններից խռոված Փոքր Միերը:

ցելեցին տարբեր անձինք՝ Վանի թեմի եպիսկոպոսը¹⁵, քաղաքի ներկայացուցիչը, պատգամավորներ քաղաքից, նահանգապետի տեղակալը և այլոք: Նրանց բոլորին հետաքրքրում էր իրադրության և Վանի հաստատուն լինելու հարցը: Ես փորձով լավ գիտեի, որ մենք սովորաբար միշտ ձգտում էինք մեծ տարածքներ գրավել՝ առանց հաշվի առնելու, թե արդյո՞ք կարող ենք [տարածքները] պահպանել, ուստի որոշակի որևէ բան չսասացի, այլ հայտարարեցի, որ ավելի լավ է հույսը դնել սեփական ուժերի վրա, ինչի համար անհրաժեշտ է լավ կազմակերպվել: Շնորհակալություն հայտնեցի այցելության համար և ներողություն խնդրեցի նրանցից, ում, ցավոք, չեմ կարողացել այցելել, քանի որ հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ջոկատով առաջանալու ենք դեպի Արճեշ քաղաքը: Նրանք մեկնեցին, երբ արդեն մթնում էր:

Ցավոք, Վանում դեռևս չէին կազմակերպվել մթերային պահեստներ, ուստի չնայած իմ ցանկությանը, չկարողացա լրացնել իմ [զորամասի] անձեռնմխելի պաշարները: Բոլոր համբարակները մատնացույց էին անում մթերքով հարուստ Արճեշը, սակայն ես, իհարկե, խիստ կասկածով էի վերաբերվում նրանց հավաստիացումներին, քանի որ ավելի շուտ Վանը կարող էր ունենալ այդ պաշարները, քան մատակարարման աղբյուրներից հեռու գտնվող փոքր քաղաք Արճեշը: Գեներալ Շարպանտյեի¹⁶ գործողությունը կարող է օրինակ հանդիսանալ, թե որքան սուր էր դրված պարենի մատակարարման հարցը, երբ նա իր հեծելազորային դիվիզիայով Բաշկալեից գալիս էր Վան: Նա Վանին մոտենալիս հեռագրեց, որ իր [դիվիզիայի] համար մի քանի օրվա հացի պաշար մթերեն, սակայն գալով Վան՝ նա [տեղեկացավ], որ համբարակությունը ոչինչ չի մթերել: Այդ ժամանակ նա հետևյալ միջոցներին դիմեց. ժամապահներ կարգեց ինչպես մասնավոր, այնպես էլ համբարակային փոերում ու գրավեց առկա ողջ թխած հացը: Եվ միայն դրա շնորհիվ նա կարողացավ շարունակել առաջխաղացումը, չնայած կորպուսի հրամանատարը խիստ դժգոհ էր գեներալ Շարպանտյեի արարքից: Իմ կարծիքով՝ նա ճիշտ վարվեց. գորքերն արդեն զգում էին պարենի անբավարար լինելը: Իհարկե, դրա պատճառը համբարակների լիակատար անձեռնընթացությունն էր: Մատակարարումը կարելի էր կազմակերպել երկու ճանապարհով՝ Բայազետից կամ ավելի ստույգ՝ Իգդիրից ու Խոյից (Պարսկաստան) Կոթուրով և Սարայով:

Նիկոլայան ջոկատի կողմից Վանը գրավելուց հետո հակառակորդը սկսեց կուտակվել Վանա լճի հարավային ափին: Այդ կողմից Վանը պաշտպանելու նպատակով Արդամիր գյուղ որպես առաջապահ ուղարկվեց ջոկատ, որը կազմված էր Հայկական 2-րդ, 3-րդ և 4-րդ դրուժինաներից, մեկ հեծյալ մարտկոցից և թերեքցիների 3 հարյուրյակներից: Հալի բեյին հետապնդող գեներալ Տրուֆինի¹⁷ ջոկատի վերադառնալուց հետո վերջինս նույնպես ուղարկվեց Արդամիր: Այդ ջոկատի հրամանատարությունը հանձնվեց գեներալ Տրուֆինին, իսկ թերեքցիները հետ կանչվեցին Արդամիրից Վան: Գեներալ Տրուֆինը անմիջականորեն ենթարկվում էր կորպուսի հրամանատարին:

Հայկական 1-ին դրուժինան Վանին մոտենալիս քաղաք չմտավ, այլ ժամանակավորապես բանակեց Նարեկ-Սուրբ Խաչ վանքի¹⁸ մոտ, և միայն երկու օր անց ժամանեց Վան, որտեղ նրան հանդիսավոր ընդունելություն ցույց տրվեց բնակչության կողմից՝

15 Այդ ժամանակ Վանի առաջնորդական փոխանորդը Եզնիկ վարդապետ Ներկարարյանն էր (1870-1926):

16 Շարպանտյե Գուստավ-Կլաս Ռոբերտի (1858-1918), գեներալ-լեյտենանտ, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի պետ (22.12.1910, 29.12.1915):

17 Տրուֆինի Իվան Եվդոկիմի (1852-1922), գեներալ-լեյտենանտ, Անդրբայկալյան հատուկ 2-րդ կազակային բրիգադի հրամանատար:

18 Նարեկ-Սուրբ Խաչ - Նարեկավանք, 10-րդ դարի վանական համալիր Վանա լճի արևելյան ափին գտնվող Նարեկ գյուղում: Նարեկավանքում է ուսանել Գրիգոր Նարեկացին: Վանքի խորանում է գտնվել Գրիգոր Նարեկացու գերեզմանը: Վանքը ավերվել է թուրքերի կողմից:

նահանգապետ Արամի գլխավորությամբ: Երկու օր մնալուց հետո [1-ին դրուժինան] ուղարկվեց Արդամիր՝ գեներալ Տրուֆինի ջոկատին միանալու համար: Գեներալ Տրուֆինի ջոկատը մինչև 1-ին դրուժինայի գալը տեղափոխվել էր Ջեյվա գյուղի մոտ, որտեղ հակառակորդը գրավել էր գերիշխող բարձունքները և ամրապնդել էր իր դիրքերը մի քանի շարք խրամատներով: Արդամիր եկավ գեներալ Նիկոլան իր շտաբի պետի հետ՝ 1-ին դրուժինայի ստուգատես անցկացնելու համար: Մի քանի օր անց [հունիսի 14-ին] 1-ին դրուժինան միացավ գեներալ Տրուֆինի ջոկատին: Նրան [1-ին դրուժինային] ծափահարություններով դիմավորեցին 2-րդ, 3-րդ և 4-րդ դրուժինաները:

Հակառակորդի ուժերը գնալով էլ ավելի էին ուժեղանում: Տրուֆինի ջոկատը տեղակայված էր Ջեյվա գյուղի և Սբ. Հակոբ¹⁹ վանքի միջև: Ջոկատը կազմված էր [Հայկական] 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ դրուժինաներից²⁰, հետևակ սահմանապահ գումարտակից, մեկ հեծյալ մարտկոցից և Անդրբայկալյան կազակային բրիգադից: Երբ ջոկատը կենտրոնացվեց, գեներալ Տրուֆինը անցավ հարձակման: Մարտի առաջին օրը 4-րդ և 1-ին դրուժինաները մեծ կորուստներ ունեցան, և հաջողվեց միայն կենտրոնական մասում գրավել մի քանի խրամատներ: Դրուժինաները տեղակայված էին հետևյալ կերպ. 4-րդ դրուժինան ուղարկվեց հակառակորդի ձախ թևը, 1-ինը՝ կենտրոն, իսկ 2-րդ, 3-րդ դրուժինաները և սահմանապահները՝ հակառակորդի աջ թևը: Մեր ձախ թևում, որ ենթակա էր շրջանցման, մնաց ավելի ուժեղ ջոկատ: Թուրքերն ունեին 4 հրանոթ: Նրանց հրետանին շատ լավ էր գործում, և նա հիմնական վնասը հասցրեց մեր զորքերին, որի հետևանքով 1-ին և 4-րդ դրուժինաները մեծ կորուստներ ունեցան, կար փամփուշտի մեծ պակաս, ուստի գեներալ Տրուֆինը որոշեց գիշերը իր զորքերը հետ քաշել, չնայած նրան, որ Անդրանիկը շարունակում էր պնդել մարտը շարունակելու մասին: Սակայն գիշերը, շնորհիվ 1-ին դրուժինայի որոշ վաշտապետերի նախաձեռնության, որոնք դեռևս ցերեկը գրավել էին խրամատները, իրենց վաշտերով առաջացան ու նրանց հաջողվեց գրավել խրամատների երկրորդ շարքը: Մյուս դրուժինաները, լսելով ուժեղ «ուռա՛»-ն, նույնպես անցան հարձակման և ի վերջո գրավեցին գլխավոր դիրքը: Թուրքերը սկսեցին հապշտապ նահանջել դեպի Սորբ²¹, որի ճանապարհին կրկին լավ դիրքեր գրավեցին: Տրուֆինի ջոկատը շարունակեց հետապնդել նրանց, և մարտ տեղի ունեցավ Բաս²² գյուղի մոտ: Այստեղ մեր ջոկատը գրավեց հակառակորդի բանակատեղին, 4 թնդանոթ, վիրակապման միջոցներ, հանդերձանք և նույնիսկ շորեր: Թուրքերը հապշտապ նահանջում էին դեպի Թուֆա գյուղը և ապա դեպի Բիթլիս ու դիրքեր գրավելուց հետո սկսում էին դրանք ամրացնել: Մեր ջոկատը գրավում է Թուֆա, Ուրթափ և Դատվան գյուղերը: Այդ բոլոր գյուղերը Վանա լճի արևմտյան ափին էին: Այս ջոկատի [գեներալ Տրուֆինի] հետագա առաջադրանքը Բիթլիս առաջանալն էր:

Հետևակ սահմանապահների գումարտակի հրամանատար, գնդապետ Ուշակովը ինձ հետևյալ գնահատականը տվեց գեներալ Տրուֆինի ջոկատի ղեկավար անձանց վերաբերյալ.

«Գեներալ Տրուֆին, բավականին անդեմ անձնավորություն է, բարեսիրտ մարդ է, սակավ շարժունակ, ծեր է, ըստ էության, ռազմական իրադրությունը այնքան էլ լավ չի

19 Կապուտկոդի Սբ. Հակոբ վանքը կառուցվել է Վասպուրականի արքա Գագիկ Արծրունու (908-943) կողմից և հայտնի է Ընծաքարի վանք անունով, գտնվել է Վասպուրականի նահանգում՝ Կապուտկոդ լեռան լանջին:

20 Стн Масловский Е. В., указ. соч., т. 2: 170:

21 Գյուղ Կարճկան գավառում՝ Բաղեշ քաղաքից մոտ 35 կմ հյուսիս-արևելք:

22 Գտնվում է Բաղեշից 28 կմ հարավ-արևմուտք:

պատկերացնում: Անձնապես քաջ է: Ենթակաների հետ հաշտ է: Բոլոր գործերը տնօրինում է շտաբի պետը:

Նրա շտաբի պետ, կապիտան Պոպովը շատ ճշտապահ է, բարեկիրթ, խելացի, սակայն սպայությունից իրեն հեռու է պահում, հավանաբար, սիրում է գրասենյակային գործերը: Ընդհանուր առմամբ իր տեղում է:

Քեռի²³: Հայկական դրոժինանների բոլոր պետերից առավել համակրելի է: Գործականում զինվորական գործը շատ լավ է հասկանում և որպես հրամանատար մարտի ժամանակ իր տեղում է: Նկատվել են դեպքեր, երբ խառնվել է մանրութների մեջ և ղեկավարել դասակը: Ռուս սպաների շրջանում վայելում էր հարգանք, չնայած ռուսերեն չէր խոսում: Շատ քաջ ու հանգիստ է մարտի ժամանակ: Ղեկավարությունից հեռու էր մնում:

Համազասպ: Խելացի, բանհմաց, մի քիչ փութկոտ: Սիրում էր ղեկավարության աչքին երևալ: Ռազմական գործը հասկանում էր, սակայն խուսափում էր իրեն ռիսկի ենթարկել: Մարդամոտ էր և քաղաքավարի:

Դրո: Շատ խելացի է, բանհմաց, տաքարյուն: Մարտը լավ է ղեկավարում: Քաջ է, սիրում է զբաղվել քաղաքականությամբ և այդ թեմայի վերաբերյալ զրույցներ վարել, երբեմն մատնում էր իր ռուսատյացությունը, բնավորությամբ դաժան էր: Ռուսական ղեկավարությունը և սպայությունը նրան չէին սիրում²⁴:

Անդրանիկ: Իր մեծամտությամբ անխտիր բոլորի վրա միանգամայն վատ տպավորություն է թողել: Կարգապահության հետ հաշվի չէր նստում, հրամանները չէր կատարում: Զեյվայի մոտ մարտից առաջ, երբ ամեն ինչ նախապատրաստված էր, գրոհի իր պլանը առաջարկեց, որը ռազմական տեսակետից անգրագետ էր կազմված և աչքի էր ընկնում արտակարգ բարդությամբ: Անդրանիկի պլանը հիմնված էր ոչ թե իրադրությունը մեր կողմից օգտագործելու վրա, այլ առաջարկվում էին մեծամասամբ մանր, միամիտ խորամանկություններ, որոնք պետք է հակառակորդին մոլորեցնեին: Ընդհանրապես զգացվում էր, որ նա չէր կարող ղեկավարել մեծ ջոկատ: Երբ Տրուխինը Անդրանիկին ասաց, որ ուշ է գրոհի պլանը փոխել, վերջինս վիրավորվեց ու աղմկեց: Քեռիին, Համազասպին և Դրոյին չէր կարելի հանդիմանել, որ անկարգապահ են:

Գեներալ Նիկոլաև՝ Գլխավոր շտաբի սպա: Խելացի է, բավականին ակտիվ: Ինքնուրույն էր գործում և անկախությամբ առաջացնում էր գեներալ Օգանովսկու (կորպուսի հրամանատար) դժգոհությունը»:

Նրա շտաբի պետը (կարծեմ Վալուն, ես այժմ [ստույգ] չեմ հիշում նրա ազգանունը) Գլխավոր շտաբի գնդապետ կամ փոխգնդապետ էր, ստույգ չեմ հիշում: Մոլի հարբեցող էր: Հիմար մարդ չէր և ի զորու էր կողմնորոշվել [մարտական] իրադրության մեջ, սակայն նրա բոլոր որակներն ի դերս էին լինում անսթափ հարբեցողության հետևանքով:

Հունիսի 16-ի վաղ առավոտյան ես իմ ջոկատի հետ շարժվեցի Վանա լճի հյուսիսային ափով: Ջոկատն անցավ քաղաքով²⁵ և գլխավոր փողոցով²⁶: Ցավալի էր դիտել այն ավերածությունները, որոնք կատարվել էին Վանում: Թուրքական թաղամասի լավագույն տները, որոնք թաղված էին հիասքանչ բուսականության մեջ, բոլորն էլ քարոքանդ էին արված, իսկ փայտյա մասերը՝ այրված: Փողոցը լայն էր և ուղիղ: Քաղաքի այս հատվածը

23 Անդրկասպյան կազակային բրիգադի սպա Ֆ. Ելիսեևը վկայում է, որ Քեռին սովորություն չունեի թաքնվել թշնամուց և կարող էր հակառակորդի կրակի տակ ողջ հասակով կանգնած հանգիստ գրուցել պառկած զինծառայողների հետ, տե՛ս **Елисеєв Ф. И.**, Казаки на Кавказском фронте (1914-1917), М., 2001, http://militera.lib.ru/memo/russian/eliseev_fi/index.html (մուտքը՝ 11.07.2019):

24 Ֆ. Ելիսեևը Դրոյին համարում է բոլորից քաջը, տե՛ս նույն տեղում:

25 Նկատի ունի Քաղաքամեջ թաղամասը:

26 Նկատի ունի Վանի Սղգայի ջաղդա գլխավոր փողոցը:

ամառանոցի տեսք ուներ: Վանից դուրս գալուց հետո ճանապարհը երկար ժամանակ ձգվում էր համատարած այգիների միջով: Չկար փոշի, և շոգ չէր՝ շնորհիվ հարուստ բուսականության, ինչի արդյունքում մարդիկ [զինծառայողները] այնքան էլ չէին հոգնում: Գիշերակացը Կարա-սու գետակի մոտ էր:

Հաջորդ օրը, այսինքն՝ հունիսի 17-ին, ջոկատը շարունակեց երթը: Սխալմամբ մենք գլխավոր ճանապարհից թեքվեցինք կողքի [ճանապարհը], որը ձգվում էր լճի ափով: Սոսկումով դիտում էինք դատարակ, հարուստ գյուղերը, որոնք բոլորը ավերակներ էին և լցված էին մարդկանց ու կենդանիների դիակներով: Գիշերակացը Խժիշկ գյուղի մոտ էր: Զոկատը բանակեց անմիջականորեն լճափին: Իհարկե, մարդիկ դրանից օգտվեցին և գնացին լողալու: Նրանք զարմանում էին, որ կարելի է լվացվել առանց օճառի և նույնիսկ սպիտակեղենը լվանալ: Լճում մեծ քանակությամբ սողա կա: Ձկնատեսակներից լճում կա մի տեսակ, որը նման է մեր ծովատառեխին, սակայն շատ համով ձուկ է:

Զոկատը մեծ կարիք ուներ պարենի, նույնիսկ հացի և չոր պաքսիմատի: Յուրաքանչյուր մարդուն տրվում էր մեկ, հազվադեպ՝ երկու ֆունտ հաց, իսկ գլխավորապես՝ չոր պաքսիմատ, սակայն նորմայից պակաս: Հացը հիմնականում վատ որակի էր և մատակարարվում էր Վանից փոքրիկ նավակներով: Ստիպված էինք, որտեղ որ հնարավոր էր, այլուր հայթայթել և բլիթներ թխել:

Հունիսի 18-ին ջոկատը շարունակեց իր երթը մինչև Փանգ գյուղը, որտեղ և կատարվեց ցերեկակացը: Կորպուսի հրամանատարը ողջ ժամանակ ձգտում էր ք. Ադիջևազ [Արծկե] ուղղվող զորամասերի տեղափոխումը կատարել խղճով նավակներով՝ այդ կերպ ցանկանալով կարճել ճանապարհը, սակայն այդ մտադրությունը սխալ էր: Լճի վրա իշխող քամիները և պարզունակ նավերը թույլ չէին տալիս կազմակերպել կանոնավոր չվերթներ, երբեմն նավերը չէին կարողանում ափին կայանել մի քանի օր: Այդպիսի դեպքեր տեղի էին ունեցել մի քանի զորամասերի հետ, որոնք լճում մինչև երեք օր այս ու այն կողմ էին լողում: Գեներալ Մուդրին²⁷ կտրականապես հրաժարվեց իր պլաստուններին նման կերպ տեղափոխել: Ես ի սրտե նուրախ էի, որ դրանից իմ զորամասերը խուսափեցին:

Մեր ջոկատի հետ էր գալիս կորպուսի շտաբի պետ, գեներալ Ույաբինկինը: Նրա հետ ընդհանուր լեզու չէր գտնում կորպուսի հրամանատարը, ինչի հետևանքով նրան ուղարկում էր տարբեր գործուղումների: Երբ ջոկատը Փանգ գյուղից ուղղվեց դեպի Առնիս գյուղը, նա մեկնեց Բերկրի կայե և ապա դեպի Իգդիր: Հաջորդ անցումը մինչև Առնիս գյուղն էր: Երկու գյուղերը միմյանցից մոտիկ էին գտնվում: Բնակիչներ չկային: Մարդիկ, դրանից օգտվելով, սկսեցին վառելիք վերցնել ավերված շինություններից:

[Հունիսի] 21-ին շարժվեցինք դեպի Արճեշ քաղաք: Ճանապարհի շրջակա տեղանքը գեղեցիկ էր, սակայն ճանապարհին հանդիպող բոլոր հարուստ գյուղերը կիսաքանդ էին և դատարկ: Ամենուր հացահատիկի հասկերը հիասքանչ էին: Ձինվորները ապշել էին այդ հասկերի քանակից և նույնիսկ մարդիկ, որոնք Կուբանի մարզից էին, խոստովանում էին, որ Վանի հացահատիկի հասկերը ավելի շատ են, քան իրենց մոտ՝ Կուբանում: Ձարմանալի էր, որ նրանց մոտ մարգային մշակումն էր ընդունված:

Գիշերակացի կանգնեցինք քաղաքի մոտ: Տները մեծամասամբ քարոքանդ էին, արական սեռի բնակիչները կոտորվել էին, ողջ էին միայն կանայք ու երեխաները, կային նաև եկվոր տղամարդիկ: Իրենց գեղեցկությամբ ինձ ապշեցրին երկու հուշարձաններ, որոնք գտնվում էին Արճեշ տանող ճանապարհի զառիվայրին: Նրանք կառուցված էին տաշած

27 **Մուդրի Սատվեյ Միխայիլի** (1855-1916), գեներալ-մայոր, Կուբանյան առանձին 4-րդ պլաստունյան բրիգադի պետ:

վարդագույն քարից, իսկ տանիքը՝ կոնուսածև սև քարից, որոնց արտաքին տեսքը գլանածև էր կոնուսային գագաթով: Դրանք, կարծեմ, անվանում են գմբեթներ և ասում են, որ արաբական ծագում ունեն:

Արճեշում մի քիչ պարեն տվեցին, որը Վանից բերվել էր առագաստանավերով: Համբարակը զգուշացրեց, որ հետագա առաջխաղացման ընթացքում մենք ոչինչ չենք գտնի: Իմ համբարակից տեղեկանալով, որ Արճեշում կա Կովկասյան հեծելազորային դիվիզիայի պաքսիմատի պաշար, ես որոշեցի այն վերցնել, որ փոքր-ինչ ապահովեմ իմ ջոկատը: Մարդիկ օգտվեցին միօրյա հանգստից. լվացին սպիտակեղենը, հնարավորին չափով կարգի բերեցին կոշիկները:

Արճեշում մոլեգնում էր բծավոր տիֆը, որի պատճառով քաղաքը շրջապատված էր ժամապահներով, ուստի ես արգելեցի այնտեղ մտնել: Լճի հյուսիսային մասով առաջանալիս հարավային ափից ամբողջ ժամանակ մեզ լսելի էր հրետանային ու հրացանային հրաձգություն: Տարբեր լուրեր էին հասնում, թե հայկական դրուժինաները ծանր վիճակում են, որ նրանք ծանր կորուստներ են կրում, իսկ ըստ ուրիշների [այլ տեղեկատվության համաձայն]՝ նրանք փայլուն հաղթանակ են տարել և նույնիսկ 4 թնդանոթ են գրավել: Իհարկե, այդ ամենը մեզ, հատկապես՝ հայերիս, նյարդայնացնում էր: Վատ էր այն, որ կորպուսը [հրամանատարությունը], չգիտես, թե ինչու, ավելորդ էր համարում մեզ կողմնորոշել²⁸:

Հունիսի 23-ին շարժվեցինք դեպի գ. Նորշեն: Շատ տանջվեցինք Արճեշ քաղաքի մոտ գետակով անցում կատարելիս: Գետակը լեռներում սկսված հալոցքի հետևանքով հորդառատ էր դարձել, և, ցավոք, կամուրջ չկար: Մարդիկ, բեռնակիր գումակը և հատկապես՝ լեռնային թնդանոթները, ահռելի դժվարություններով իրականացրին գետանցումը, որին ստիպված էինք մի քանի ժամ տրամադրել: Մինչդեռ այդտեղ հեշտությամբ կարելի էր կամուրջ կառուցել, քանի որ Արճեշում առատ բուսականություն կար, և շինանյութի պակաս չկար:

Ես ջոկատը Նորշեն տարա կարճ ճանապարհով, իսկ հրետանին փոքրաթիվ պաշտպանության տակ ուղարկեցի ափային լավ ճանապարհով: Նորշեն հասանք վաղ: Այստեղ նախատեսված էր ջոկատի բանակումը շատ թե քիչ երկար ժամանակ՝ որպես կորպուսի պահեստազոր: Սակայն տեղ հասնելուց հետո կորպուսի շտաբից հրաման ստացվեց՝ շարժվել դեպի Ադիջևազ քաղաքը: Նորշենում, չնայած հունիս ամիսն էր վերջանում, գիշերը ցուրտ էր, որի պատճառը դեռևս խորը ձյունով ծածկված Սիփան դաղի մոտիկությունն էր:

[Հունիսի] 24-ին ջոկատը շարժվեց դեպի Ադիջևազ: Հանդիպակաց ուժեղ քամի էր փոշիով և ավազով, որը ուժգնացավ հատկապես կեսօրից հետո, սակայն Ադիջևազին մոտենալիս քամին այնքան էլ ուժեղ չէր՝ շնորհիվ առատ բուսականության: Անցումը մեծ էր՝ մոտ 35 վերստ, մարդիկ բավականին հոգնել էին: Բանակատեղին ընտրվեց լճափին, որը առատ էր լավ աղբյուրներով: Ընդհանրապես Վանա լճի ափին կային հրաշալի ջրով մեծ թվով աղբյուրներ: Վառելիքը առատ էր՝ շնորհիվ հարուստ արհեստական բուսականության:

Քաղաքը դատարկ էր: Տների մի մասը ավերված էր: Կանգուն մնացած շինությունների թվում կային ոչ քիչ թվով լավերը: Հունիսի 25-ին օրահանգստից հետո պետք է շարժվեինք դեպի գ. Խանիկ: Ես օգտվեցի դադարից, որպեսզի ուղեկցող փնտրեմ դեպի Խանիկ: Դա հանձնարարեցի համհարզին, որովհետև շտաբի պետը թուղթ էր խաղում (նա ընդհանրապես թղթախաղի մեծ սիրահար էր), և ես չցանկացա նրան [խաղից] կտրել:

28 Կարելի է ենթադրել, որ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբը շարունակում էր կասկածել, որ Թ. Նազարբեկյանի բրիգադում գործում է թուրքական լուրես:

Ուղեկցող գտնելուց հետո շտաբի պետը ինձ մոտ եկավ գանգատով, թե ես մտնում եմ իր պարտականությունների շրջանակի մեջ: Ես նրան բացատրեցի, թե ես ինչու դա արեցի, և նշեցի, որ նրա պարտականությունների շրջանակը նաև իմն է: Նա հեռացավ վիրավորված և դրանից հետո նա մի քանի օր իրեն հեռու էր պահում, ինչին, իհարկե, ուշադրություն չէի դարձնում: Այդ խոսակցությունը նույնիսկ ինձ վրդովեց:

Հունիսի 26-ին ուղեցույցի ուղեկցությամբ ջոկատը դուրս եկավ Ադիջևագից դեպի Խանիկ գյուղը: Ստիպված էինք բավականաչափ ժամանակ բարձրանալ լեռը, որից հետո ճանապարհը դեպի սարահարթ էր: Շրջակայքում շատ հարուստ արոտավայրեր էին: Հանդիպող գյուղերը քրդական էին: Բնակիչները մնացել էին իրենց տեղում: Այդ սարահարթի բարձրությունը 8000 ֆուտ էր: Այն աստիճան զով էր, որ շատ սպաներ տաք շորեր հագան, թեթև քամի էր փչում Սիփան դաղից: Անցումը մոտ 30 վերստ էր: Խանիկ հասանք երեկոյան մոտ ժամը 5-ին: Այդ գյուղը չերթեգական է և ուներ բավականին լավ շինություններ: Բնակիչներ չկային: Պարզվեց, որ իմ ջոկատի հետ հանդիպելու համար Մանագլետրտից եկել էր կորպուսի հրամանատար, գեներալ Օգանովսկին և նույնիսկ լավ տեղյակ լինելով, որ իմ ջոկատում շաքարի մեծ կարիք կա, ավտոմեքենայով բերել էր իմ ջոկատի համար:

Խանիկում գիշերակացին մենք հանդիպեցինք բանակած գեներալ Մուդրիի Կուբանյան 3-րդ պլաստունյան բրիգադին: Կորպուսի հրամանատարը նրա մոտ մեզ էր սպասում: Նա շատ էր զարմացել, որ գեներալ Մուդրիին ուղեկցում էր խոհարարուհին, որ բացի ուտելիք պատրաստելուց՝ ծառայում էր նրան և լվանում նրա սպիտակեղենը: [Օգանովսկին] հրամայեց նրան անհապաղ թիկունք ուղարկել:

Մեր ժամանման պահին կորպուսի զորամասերը տեղակայված էին ագ. Դերիկ, Լաթեր²⁹ (Կուփի դիմաց), Թորթոն և Ախլաթ քաղաք (Փուրխուս գյուղի դիմաց) գծով: Գիշերն այն աստիճան ցուրտ էր այնտեղ, որ ես, գտնվելով վրանում, ինձ ծածկեցի իմ բոլոր տաք շորերով, սակայն չկարողացա տաքանալ. չնայած Սիփան դաղը Նորջենին մոտիկ էր, սակայն այնտեղ նման ցուրտ չէր զգացվում:

Հունիսի 27-ի վաղ առավոտյան կորպուսի հրամանատարի հրամանի համաձայն երթի դուրս եկան՝ պլաստունների բրիգադը դեպի Լաթեր գյուղը, 66-րդ հետևակ. դիվիզիայի պետ, գեներալ Վորոպանովի ենթակայության տակ, որը գործում էր Կուփի դեմ, և Կովկասյան 7-րդ հրաձգ. գունդը քաղ. Ախլաթ, գեներալ Շարպանտյեյի հրամանատարության տակ, որը գործում էր Փուրխուս և Թորթոն գյուղերում գտնվող թուրքերի դեմ:

[Հունիսի] 27-ին կորպուսի հրամանատարն ինձ և [իմ] շտաբի պետին հրամայեց ներկայանալ քաղ. Մանագլետրտ՝ խորհրդակցության: Իմ ջոկատը հանդիսանում էր Մանագլետրտի ջոկատի պահեստազորը: Ժամանելով Մանագլետրտ՝ ես ներկայացա կորպուսի հրամանատարին: Նա բացատրեց կորպուսի առջև դրված առաջադրանքը՝ [հունիսի] 28-ին անցնել հարձակման Կուփի³⁰ դիրքերի, իսկ ձախ թևում՝ Փուրխուսի վրա: Միաժամանակ ինձ հանդիմանեց, որ ես չչնչացրի Հալիլ բեյին, և այժմ կրկին ստիպված ենք նրա հետ գործ ունենալ: Ես նրան պատասխանեցի, որ այնքան էլ դյուրին չէ լիովին վնասագերծել հակառակորդի ջոկատը, որն անհաջողության դեպքում միշտ էլ հնարավորություն ունի նահանջել, ինչից հետո կրկին վերականգնել իր ուժերը: Իմ խոսքերի ճշմարտացիությունը հաստատվեց հետագա մարտական գործողությունների ընթացքում:

Մանագլետրտ քաղաքը Հայաստանի երբեմնի գլխավոր քաղաքներից էր, իր մռայլությամբ ու անբարեկարգությամբ ինձ դուր չեկավ: Շատ էին փախստականները, նրանք ցա-

29 Լաթար:

30 Ոռւսական հետախուզության տվյալներով Կուփի շրջանում կենտրոնացած էր 20 հազար զինվոր և սպա:

Стен Корсун Н. Г., Алашкертская и Хамаданская операции, т. 2 64-65:

վալի վիճակում էին ու ծվարել էին բաց երկնքի տակ՝ շենքերի ու ցանկապատների մոտ: Տները մուգ և մոխրագույն քարից էին, ինչն էլ ավելի էր ուժգնացնում նրա մոայլությունը: Մեծ էր ցեխի ու ճանճերի զանգվածը: Ճանճերն այնքան հոծ էին, որ իրենց զանգվածով ամբողջությամբ ծածկում էին մեր հագուստն ու կոշիկները: Փողոցները ծուռումուռ էին, և ես որևէ լավ տուն չտեսա:

Մանագլերտում էին կենտրոնացված համբարակային պահեստները, հացի փոշերը և բուժական հաստատությունները: Խորհրդակցության ավարտից հետո ես շտաբի պետի հետ վերադարձա Խանիկ: Ճանապարհին ես ականատես եղա, թե ինչպես Արևմտյան-եվրոպական ճակատում³¹ գրավված ազնվացեղ ծիերը չէին կարողանում չնչին բեռով հեծելազորային ֆուրգոնները բարձրացնել լեռը: Մենք մեր գիշերակացին հասանք միայն երեկոյան:

Հաջորդ օրը, այսինքն՝ հունիսի 28-ի արշալույսին, համաձայն կորպուսի հրամանատարի հեռախոսագրի՝ Կովկ. 6-րդ հրաձգային գունդը շարժվեց դեպի Լաթեր, իսկ այնտեղից՝ գ. Դերիկ, որտեղ մարտական գործողությունները սկսվելու կապակցությամբ գտնվելու էր կորպուսի հրամանատարն իր շտաբով՝

Գեներալ Վորոպանովի ջոկատը կազմված էր 66-րդ հետևակային դիվիզիայի 3 և Կովկասյան հեծելազորային դիվիզիայի (Տվերյան դրագունյան և Խապյորյան կազակ. գնդեր) 2 գնդերից, իսկ Ախլաթինը՝ 66-րդ հետևակ. դիվիզիայի մեկ, Կովկ. 7-րդ հրաձգայինի մեկ գնդերից, դրագունյան (Նիժեգորոդյան և Սևերսկյան) 2 գնդերից: Սևերսկյան գունդը գտնվում էր Թորթոնում:

Հունիսի 28-ի [լույս] 29-ի լուսաբացին, այդ ջոկատներն անցան հարձակման՝ նպատակ ունենալով գրավել Կոփի դիրքերը և Փուրխուս գյուղը, սակայն, ցավոք, մարտական գործողությունները հաջողություն չունեցան, իսկ կորուստները զգալի էին հատկապես պլաստունների մոտ, որոնք առաջ էին քաշվել պահեստազորից:

Կովկ. 7-րդ հրաձգ. գնդի հրամանատար, գնդապետ Օբրազցովը ինձ զեկուցեց, որ իր գնդով գրավել է Փուրխուս գյուղը, սակայն չստանալով 66-րդ հետևակային դիվիզիայի աջակցությունը՝ հարկադրված էր նահանջել, ուստի նման պայմաններում հաջողություն չէր կարող լինել, ի դեպ, գունդը զգալի կորուստներ կրեց:

Հունիսի 29-ին թուրքերը, ուժեր կուտակելով Թորթոնի մոտ, անցան հարձակման և Սևերսկյան դրագունյան գունդը հետ մղվեց, [որից հետո] թուրքերը գրավեցին Թորթոնն ու շրջակա բարձունքները: Կորպուսի պահեստազորից Փերանքոյ գյուղով օգնության ուղարկվեց Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 2-րդ գումարտակ 2 լեռնային թնդանոթներով, սակայն կիրճով առաջանալ այլևս չէր կարող: Այդ գումարտակը Թորթոնին մոտ 2 վերստ չհասած ընկավ ուժեղ հրացանային և հրետանային կրակի տակ: Բացի այդ, հակառակորդը գրավել էր գերիշխող դիրքեր և իր շարժումով սկսեց սպառնալ գումարտակի թևին, ուստի նա [գումարտակը] ստիպված էր նահանջել Կեկերյու գյուղը և այնտեղ միանալ զորային ավագ³² Բլոխինի³³ ջոկատին, որը կազմված էր 22-րդ Պլաստունյան գումարտակից և Լաբինսկյան կազակ. գնդի 3 հարյուրյակից:

Հունիսի 30-ին գրոհները վերսկսեցին, սակայն կրկին անհաջող, իսկ այդ ընթացքում Թորթոնի մոտ թուրքական ջոկատը համալրվելով սպառնում էր Կոփի և Ախլաթի ջո-

31 Նկատի ունի ռուս-ավստրիական ռազմաճակատը:

32 Կազակային զորքերում սպայական կոչում, որը հավասարազոր է հետևակի փոխգնդապետի կոչման:

33 **Բլոխին Բորիս Յակովի** (1877-1919), գնդապետ (17.06.1916), Կուբանյան 22-րդ պլաստունյան բրիգադի հրամանատար:

կատների թևերին: [Հունիսի] 30-ին կորպուսի հրամանատարը ինձ կարգադրեց շարժվել դեպի Լաթեր, և քանի որ ինձ դեռևս [հունիսի] 28-ին հրամայված էր ցանկացած պահին պատրաստ լինել գործելու, ես հրամանը ստանալուց հետո անհապաղ Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի և մեկ լեռնային մարտկոցով Լաթեր հասնելուց հետո հրաման ստացա առաջանալ Կեկերյու գյուղը և [հուլիսի] 1-ին շարժվել Թորթոն՝ գրավելու թուրքերի դիրքերը և Թորթոն գյուղը: Հուլիսի 1-ին՝ առավոտյան ժամը 6-ին, ես իմ ջոկատով դուրս եկա Կեկերյուից գետակի ձորակով Քերս գյուղի ուղղությամբ, որտեղ տեղակայված էր նահանջած Սևերսկյան դրագունյան գունդը:

Ջոկատը թուրքական դիրքերին մոտեցավ ժամը 12-ի մոտակայքում: Թուրքերը որևէ ակտիվություն չէին ցուցաբերում: Սևերսկյան դրագունյան գնդի հրամանատար, գնդապետ Կրոպայցովից³⁴ տեղեկություն ստանալով հակառակորդի մասին, բացի այդ իրականացնելով հետախուզում՝ ես համոզվեցի, որ հակառակորդը Թորթոն գյուղից հարավ գերիշխող դիրքեր է գրավել, որոնք ամրացված էին մի քանի շարք խրամատներով, և նրա ուժերը մոտ 3 թաթուր են: Հակառակորդի նկատմամբ ունենալով ահռելի առավելություն հրետանիով՝ ես որոշեցի, որ դա է հաջողության գլխավոր գրավականը, ուստի հրետանին, դիրքեր գրավելով, կրակ բացեց: Մեկ գումարտակ թողնելով պահեստագործում, 2 գումարտակ՝ գնդի հրամանատարի ղեկավարությամբ՝ ուղարկեցի հակառակորդի դիրքերի վրա: Ճակատային գրոհը ուղեկցվելու էր [թուրքերի] երկու, հատկապես՝ աջ թևի շրջանցմամբ, քանի որ [հակառակորդի] նահանջը կատարվելու էր այդ թևով: Մեր հրետանին հաջող նշանավորձ կատարեց: Պորուչիկ³⁵ Դմիտրաշկոյի մի [հրետանային] դասակ այնպես տեղակայվեց, որ կրակի հակառակորդի խրամատների երկայնքով: Այս կրակը ամենակորստաբերը հանդիսացավ հակառակորդի համար:

Քանի դեռ ընթանում էր հրետանային նախապատրաստությունը, հրաձիգները, մարտաշարք կազմելով, ուշադրություն չդարձնելով տեղանքի խիստ կտրտված լինելուն և հակառակորդի ուժգին կրակին, անցան հարձակման: Երբ հրաձիգները մոտեցան դիրքերին և «ուռա՛» գոչելով՝ նետվեցին դեպի խրամատները, թուրքերը չդիմացան և սկսեցին լքել խրամատները և արագ նահանջել դեպի Բեյլաջանի լեռները: Ցավոք, հեծելագործը չէր կարող հետապնդել, քանի որ տեղանքը կտրատված էր խորը, դժվարամատչելի հեղեղատներով: Երբ մենք մոտեցանք հակառակորդի դիրքերին, ավելի ստույգ՝ խրամատներին, ապշեցինք մեր առջև հառած տեսարանից: Բոլոր խրամատները, բառիս բուն իմաստով, ամբողջությամբ լցված էին դիակներով, որոնք սպանվել էին այն երկու թնդանոթների շրայնելային³⁶ կրակից, որ կրակել էին խրամատների երկայնքով: Դրանք [սպանվածները] հիմնականում բարձրահասակ և ամրակազմ մարդիկ էին՝ թուփս դեմքերով, համազգեստը, հանդերձանքը շատ լավն էին:

Հակառակորդի հարձակմանը դիմագրավելու և Թորթոն գյուղը պաշտպանելու համար կարգադրեցի դիրքեր գրավել, իսկ ես գնացի թիկունք, որտեղ գտնվում էին իմ պահեստագործը և վիրակապման ջոկատը: Տեղ հասա, երբ արդեն մթնում էր: Անմիջապես կորպուսի շտաբ զեկուցեցի մարտերի արդյունքի և Թորթոնի գրավման մասին: Ինձ թեյի հրավիրեց վիրակապման ջոկատի անձնակազմը, չէի հասցրել մի բաժակ թեյ խմել, երբ մոտեցավ հետախուսավարը և զեկուցեց, որ կորպուսի հրամանատարն ինձ հետախուսի մոտ է կանչում:

34 Կրոպայցով (Կրոպաչև) Նիկոլայ Նիկոլայի (1860-1919-ից հետո), գնդապետ, Սևերսկյան դրագունյան գնդի հրամանատար:

35 Կրտսեր սպայական կոչում, որը հավասարազոր է լեյտենանտի կոչման:

36 Շրայնել կամ կոտորակառուձ, հրետանային արկի տեսակ հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու համար: Այն կոչվել է իր ստեղծող բրիտանական բանակի սպա Հենրի Շրայնելի (1761-1842) անունով:

Ես գնացի և կապվեցի կորպուսի հրամանատարի հետ: Նա ինձ շնորհավորեց հաջողության առթիվ և հրամայեց հաջորդ օրը՝ արշավույսին, Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակով և 4 լեռն. թնդանոթներով ուղղվել Կեկերյու գյուղը: Ես նրան զեկուցեցի, որ [դրա հետևանքով] կթուլացվի Թորթոնյան ջոկատը, քանի որ հավանական է, որ թուրքերը համարվելով հաջորդ օրը անցնեն հարձակման, և հազիվ թե 5-րդ գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանը ի զորու լինի պահել այդ կարևոր դիրքերը: Դրան նա [գեներալ Օգանովսկին] պատասխանեց, որ եթե 5-րդ գնդի հրամանատար, գնդապետ Դոկուչանը չկարողանա պահել այդ դիրքերը, ապա ինքը նրան չի ներկայացնի գեներալի կոչման: Հենց այդ նույն երեկոյան գունդը գրավեց առաջնագծի դիրքերը և սկսեց այն ամրացնել խրամատներով: Ես հեռախոսով գնդապետ Դոկուչանին փոխանցեցի կորպուսի հրամանատարի խոսքերը: Նրան նշանակելով 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակներից, 4 լեռնային թնդանոթներից և Սևերսկյան դրագունյան գնդից բաղկացած ջոկատի հրամանատար՝ հրամայեցի Թորթոն գյուղում հրաձիգներ չտեղակայել և աչալուրջ լինել, քանի որ այսօր կամ վաղը գիշերը թուրքերը կանցնեն հարձակման:

Հուլիսի 2-ի առավոտյան ես 5-րդ գնդի գումարտակով և 2 լեռնային թնդանոթներով ուղղվեցի Կեկերյու գյուղը, իսկ 5-րդ գունդը շարունակեց ամրացնել դիրքերը՝ թաղելով սպանված յուրայիններին ու թուրքերին: Հասնելով գ. Կեկերյու՝ ես կորպուսի շտաբից կարգադրություն ստացա, որ մարտական առաջադրանքը կատարելու համար իմ ենթակայության տակ են անցնում 22-րդ պլաստունյան գումարտակը, 66-րդ հետևակ, դիվիզիայի 2 լեռնային թնդանոթներ, Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի երկու գումարտակ, Լաբինսկյան կազակ. գունդը:

Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարից ստացած կարգադրության համաձայն՝ հուլիսի 2-ին իմ կողմից տրվեց հետևյալ հրամանը.

Մեր դեմ գործում են թուրքական 3 դիվիզիա (հավաքական 3-րդ, 5-րդ օգնական և 36-րդ) և մի քանի առանձին գումարտակներ, որոնք ամրացված դիրքեր են գրավում քաղաք Կոփից մինչև քաղաք Ախլաթ:

Կորպուսի հրամանատարը վճռել է հուլիսի 3-ին ջախջախել հակառակորդի Կոփի խմբավորումը՝ գլխավոր ուժերն ուղղելով Կոփյան ամրացված դիրքերի թևերը և թիկունքը, և այս գործողությունները վճռականորեն կթեթևացնեն այս առաջադրանքը կատարող մնացած տեղամասերի խնդիրները: Արևելքից և հյուսիս-արևելքից Կոփի դիրքերն է ուղարկվել գեներալ Ամասիյսկու³⁷ ջոկատը, որը գրոհը կսկսի առավոտյան ժամը 3-ին՝ Կոփ քաղաքը գրավելու համար: Կոփի դիրքերի աջ թևն է ուղարկվել գեներալ-մայոր Իսրայլովի ջոկատը: Մեզանից ծախ ակտիվ հարձակումով գեներալ-լեյտենանտ Շարպանտյեն [իր հարձակումով] շեղելու է հակառակորդի [ուշադրությունը]:

Ինձ տրված ջոկատին՝ [բաղկացած] Կովկ. 5-րդ հրաձգ. գնդից, Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակներից, Կոբանյան պլաստունյան 22-րդ գումարտակից, Կովկասյան 2-րդ հրաձգ. հրետան. դիվիզիոնի 8 թնդանոթներից, 66-րդ հետևակ. հրետա. բրիգադի 2 լեռն. թնդանոթներից, Սևերսկյան 18-րդ դրագունյան գնդից և Լաբինսկյան 1-ին կազակ. գնդի 4 հարյուրյակներից, հրամայված է գրավել Թորթոնի մոտ գտնվող բարձունքը, որպեսզի արգելենք թուրքական զորքերի անցումը Նազիկից դեպի Թորթոն, գրոհել հակառակորդի Կոփի դիրքերի աջ թևը և թիկունքը՝ այն շրջանցելով Կոփ դաղ լեռնաշղթայի և Բուլան գյուղի միջև: Հարձակումը սկսել խաչի քյոյ - Փիրան քյոյ շրջանից առավոտյան ժամը 5-ին:

37 Ամասիյսկի Յակով Կասիլի (1855-1917-ից հետո), գեներալ-մայոր, 66-րդ հետևակային դիվիզիայի բրիգադի հրամանատար:

ա. Աջ ջոկատը՝ [հրամանատար] զորային ավագ Բլոխին, Կուբանյան 22-րդ պլաստունյան ջոկատ, Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, Կովկ. 2-րդ հրաձգ. հրետ. դիվիզիոնի 4 լեռն. թնդ., 66-րդ հրետ. բրիգադի 2 լեռն. թնդանոթ, Լաբինսկյան կազակ. գնդի 10 կազակներ³⁸: Հուլիսի 3-ին շարժվել Կեկերյուից և ժամանել Խաչչի քոյ - Փիրան քոյ գիծը այն հաշվարկով, որ առավոտյան ժամը 5-ին սկսել գրոհը Կարաբաշարի ուղղությամբ, գրավել Կոփ դաղ լեռնաշղթան և գրոհել հակառակորդի Կոփի դիրքերը՝ հարձակվելով Կոփ դաղ լեռնաշղթայի երկայնքով, գործելով հակառակորդի աջ թևում և թիկունքում:

բ. Միջին ջոկատը՝ [հրամանատար] գնդապետ Նոսկով³⁹, Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 2 վաշտ և Լաբինսկյան կազակային գնդի 3 հարյուրյակ: Առաջանալ այնպիսի հաշվարկով, որ հրաձիգները վաղ առավոտյան մոտենան Բեյլաջան⁴⁰ [լեռան] արևելյան լեռնաճյուղավորման լեռնաշղթային՝ Փիրան քոյին զուգահեռ և բարձրանան այդ լեռնաշղթայի վրա և նրա գագաթով հարձակվեն դեպի հյուսիս՝ աջակցելով աջ ջոկատին:

գ. Ձախ ջոկատը [հրամանատար] գնդապետ Դոկուչան՝ Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի երկու գումարտակ, Կովկ. 2-րդ հրետան. դիվիզիոնի 4 լեռնային թնդանոթ և Սևերսկյան 18-րդ դրագունյան գնդի 6 հեծելավաշտ: Համառորեն պաշտպանել Թորթոնի մոտ գրաված դիրքերը և հնարավորության դեպքում պահպանել Թորթոնից դեպի արևմուտք գտնվող Բեյլաջանի լեռնանցքը:

դ. Պահեստագործ ավագը՝ գումարտակների հրամանատարներից մեկը: Կովկ 6-րդ հրաձգ. գնդի 1 1/2 գումարտակը և Լաբինսկյան կազակ. գնդի 1 հարյուրյակին հրամայում են առավոտյան ժամը 5-ին տեղակայվել Փիրան քոյում:

4. Հրետանային շարժապահեստին հրամայում են կատարել հրետանու պետի կարգադրությունները:

5. Վիրակապման ջոկատին հրամայում են գլխավոր վիրակապման կետը բացել ջոկատի բժշկի կարգադրությամբ (բրիգադի կոլեգիական խորհրդական⁴¹ Պանկևիչ):

6. 2-րդ կարգի գումակը թողնել գիշերակացում:

7. Մարտի սկզբում ես կլինեմ Փիրան քոյում:

8. Հարձակումից առաջ մարդկանց [զինծառայողներին] տալ տաք կերակուր և օրաբաժին պահածոներով:

9. Կրկին զգուշացնում են փամփուշտները և արկերը խնայողաբար ծախսելու մասին, քանի որ հնարավոր չէ լրացնել ռազմամթերքը, իսկ մարտը կարող է մի քանի օր տևել:

10. Չմոռանաք գրաված դիրքերը ամրացնել ուժեղացված խրամատներով:

11. Իմ տեղակալներն են գնդապետներ Դոկուչանը և Կրոպաչյովը:

Այս հրամանի համաձայն՝ ջոկատները նշված ժամանակ ելման դիրքեր գրավեցին և անցան հարձակման, սակայն 6-րդ գնդի մեկ գումարտակ և 4 թնդանոթ դեռևս տեղ չէին հասել, նրանք ուշացան, և մարտական գործողությունները սկսվեցին առանց նրանց մասնակցության:

38 Այդպես է փաստաթղթում:

39 Նոսկով Եվգենի Իլյայի (1881-1952), Կուբանյան 2-րդ պլաստունյան բրիգադի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար: Ավարտել է Նիկոլայևան ռազմական ակադեմիան:

40 Բլեշան:

41 Կոլեգիական խորհրդականը, ըստ Ռուսական կայսրությունում ընդունված աստիճանների ցուցակի 6-րդ դասի, քաղաքացիական պաշտոն էր և հավասարագոր էր բանակի գնդապետի կոչմանը: Այս դասին պատկանողները ստանում էին ազնվականի տիտղոս, որը, սակայն, չէր փոխանցվում նրանց ժառանգներին:

Ինձ մոտ՝ Փիրան քյոյում, ռեզերվում կար միայն երկու վաշտ: Բուլան գյոլ լճից հարավ, Սոգուբոլու գյոլից մինչև Խաչլի քյոյ տանող ճանապարհի հատվածը ճահճային էր և անանցանելի, ուստի աջ ջոկատը պետք է գնար դեպի Փիրան քյոյ և այնտեղից սկսեր հարձակումը: Հարձակումը սկսվեց: Աջ ջոկատը արագորեն ողջ լայնությամբ մարտաշարք կազմեց և իր հրետանու պաշտպանության տակ առաջացավ՝ սպառնալով դուրս գալ կոփյան դիրքերի թիկունքը: Արդեն ինձ տեսանելի էր հակառակորդի խտոնաշփոթը:

Այդ ժամանակ ինձ մոտ շտաբի կորպուսից եկավ շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար կապիտան Զինկևիչը: Իմ այն հարցին, թե նման ժամանակ ինչպես կարելի է լքել շտաբը, նա պատասխանեց. «Բացարձակապես չի կարելի աշխատել գետերալ Օզանովսկու հետ, շատ վատ չլիմնավորված» հրամաններ է տալիս, եկել եմ Ձեզ մոտ, որպեսզի հանգստանամ»: Այդ նույն ժամանակ ուշացած, տեղ հասավ Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի գումարտակը 4 լեռնային թնդանոթներով: Գնդապետ Նոսկովի ջոկատի 6-րդ հրաձգ. գնդի 2 վաշտերն արդեն բարձրացել էին Բեյլաջանի լեռնաշղթան և սկսել էին շարժվել դեպի Կոփ դաղ՝ սպառնալով անցնել կոփյան դիրքերի թիկունքը: Իմ աջ զորայան հրետանին դիպուկ կրակ բացեց հակառակորդի հրետանու թիկունքին: Հարձակվող ջոկատն արդեն մոտենում էր բարձունքի վրա գտնվող լճին: Փիրան քյոյից մենք հիանում էինք այդ ներդաշնակ հարձակումով և ամեն թույլ ակնկալում էինք բարեհաջող արդյունքներ: Տեսանելի էր հակառակորդի խուճապը: Այդ ժամանակ իմ թիկունքից՝ Թորթոնի կողմից, որտեղ իմ հրամանով թիկունքը հսկում էր ձախ ջոկատը, հնչեցին մեզ ուղղված հրետանային ու հրացանային կրակոցներ, բացի այդ, ես նկատեցի, թե ինչպես Բեյլաջանի լեռնանցքով հակառակորդի մեծ զանգվածը ուղղվում է դեպի Կոփ դաղ: Ես իսկույն գլխի ընկա, որ գնդապետ Դոկուչակի ձախ զորասյունը չի կատարել առաջադրանքը և անհաջողություն է կրել, և որ հակառակորդը Թորթոնի կողմից է հարձակվում: Իմ ջոկատի դրությամբ ողբերգական դարձավ: Իմ երեք կողմերում հայտնվեց հակառակորդը: Ինձ ավելի շատ հուզում էր աջ զորասյունը: Նրա հաջողություններն ապարդյուն անցան, և անհրաժեշտ էր նրանց հետ քաշել թևային կրակի տակից դեպի Փիրան քյոյ և ապա դեպի Կեկերյու, իսկ Բեյլաջանում գտնվող երկու վաշտերը պետք է իջնեին լեռնաշղթայից և հակառակորդի կրակի տակ նահանջեին հարթավայրով:

Թորթոնյան կիրճից բացված կրակից արդեն մի քանի հոգի վիրավորվեց. ինչպես սպաներ, այնպես էլ իմ կողքին կանգնած զինվորները: Այդ ժամանակ ես հրամայեցի հենց նոր եկած և պահեստազորում գտնվող գումարտակին անհապաղ մարտաշարք կազմել և դիրքավորվել, իսկ հրետանուն՝ 4 լեռնային թնդանոթներով դիրքավորվել գ. Փիրան քյոյից հարավ և կրակ բացել, իսկ միջին ու աջ ջոկատներին՝ նահանջել դեպի գ. Փիրան քյոյ:

Քանի որ գումարտակի հրամանատարը ծանր վիրավոր էր, գումարտակի մարտաշարքի ծավալումը չուշացնելու և Թորթոնից հարավ հարմար դիրք գրավելու նպատակով հրամանատարությունը ստանձնեց իմ շտաբի պետ գնդապետ Պոլտավցևը: Այդ կարգադրությունների և հրետանու հաջող գործողությունների շնորհիվ հակառակորդի հարձակումը Թորթոնի կիրճից կանգնեցվեց: Կապիտան Զինկևիչը պատրաստակամություն հայտնեց մեկնել 5-րդ հրաձգ. գունդ և տեղեկանալ իրավիճակի մասին: Որոշ ժամանակ անց նա վերադարձավ և հայտնեց, թե ինչ է հաջողվել իմանալ մեր հեծյալ պարեկախմբերից. գնդապետ Դոկուչակի ջոկատը արևածագին ենթարկվել է գրոհի և ստիպված է եղել մեծ կորուստներով նահանջել Թորթոնից արևելք՝ նախկին դիրքերը, որտեղից մենք հուլիսի 1-ին սկսել էինք հարձակումը, Բեյլաջանի լեռնաշղթայից երկու վաշտերն իջել են: Թորթոնը նրանց հետապնդել են, երբ վաշտերը իջել են հարթավայր և սկսել են

հապշտապ նահանջել, սակայն թուրքերը շարունակել են նրանց հետապնդումը հարթավայրում: Նրանց գնդակները սկսեցին խոցել նաև գ. Փիրան քյոյի մոտ գտնվողներին: Իրենց արագ հարձակմամբ և հետապնդմամբ թուրքերը մեծ վտանգ էին ներկայացնում աջ զորայան համար, որը նահանջում էր լճի կողմից դեպի գ. Փիրան քյոյը: Ես օգնության ուղարկեցի ինձ մոտ մնացած վերջին երկու վաշտերը, սակայն նրանք նույնպես ի զորու չէին կանգնեցնել թուրքերի հարձակումը:

Այդ ծանր թուրքերի ինձ մոտեցավ Լաբինսկյան կազ. գնդի զորային ավագ Աբաշկինը⁴² և թույլտվություն խնդրեց անցնել հարձակման: Ազնվորեն ասած, ես չափազանց զարմացա այդ նախաձեռնությունից և, իհարկե, ուրախությամբ թույլատրեցի: Նա արագորեն իր ջոկատով սլացավ և երբ անցավ մարտական զորաշրջան, ցրեց իր հարյուրյակները ու գոռում-գոչյունով, հեղեղի նման նետվեց թուրքերի վրա: Հարձակումը թուրքերին խիստ շփոթեցրեց: Նրանք չդիմանալով սկսեցին անկանոն նահանջել: Մեր հրաձիգները, չնայած որ խիստ հոգնած էին, նույնպես վազեցին կազակների հետևից՝ հետապնդելով թուրքերին: Կազակները հասան թուրքերին, մեծ մասին թրատեցին և գերեցին մոտ 300 սակյարների ու մի քանի սպաների:

Կոփյան դիրքերն այդ ժամանակ վերջնականապես հաղթահարվեցին, և թուրքերը նույնպես անկանոն սկսեցին նահաջել՝ ուղղվելով դեպի Կոփ դաղ և գ. Լիր⁴³, և քանի որ Թորթոնի կողմից հակառակորդը դեռևս դուրս չէր մղվել, ուստի իմ ջոկատը հարկադրված էր գիշերել դիրքերում: Ես նույնպես որոշեցի մնալ դիրքերում, չնայած Լաբինսկյան կազակ. գնդի հրամանատար, գնդապետ Նոսկովն անընդհատ համոզում էր ինձ մեկնել Փիրան քյոյ: Ես նրան թույլատրեցի այնտեղ գնալ, իսկ ինքս մնացի մարտական դիրքերում՝ պահպանություն ուղարկելով Թորթոնի ուղղությամբ դեպի լեռնաշրջան: Չէի ցանկանում գ. Փիրան քյոյ գնալ, քանի որ ստույգ չգիտեի, թե հակառակորդը ինչ կարող է ձեռնարկել մուրթն ընկնելուց հետո, քանի որ գերիշխող բարձունքները նրա ձեռքերում էին:

Երեկոյան գնդապետ Դոկուչակի ջոկատից սպա եկավ: Նրա պատմածից հետևյալը պարզվեց. չնայած իմ արգելքին՝ գնդապետ Դոկուչակը և մեկ գումարտակ տեղակայվել են Թորթոնում: Թուրքերը, իրենց ուժերը հասցնելով 6 թաբուրի, 6 թնդանոթներով և 12 գնդացիներով [հուլիսի] 2-ի լույս 3-ի գիշերը անցել են հարձակման դոկուչակյան ջոկատի դեմ: Առավոտյան թուրքերը ծածուկ հասել են Նազիկ գյոլ լճի հյուսիսային ափը և դուրս են եկել դիրքում գտնվող գումարտակի թիկունքը, և երբ մարտական պահպանությունից զեկուցել են, որ ինչ-որ շարժում է լավում, սպան դա անուշադրության է մատնել: Արշալույսից առաջ թուրքերը, գնդացիները տեղադրելով, գնդացիներից կրակ բացեցին, որով խուճապ առաջացրին դիրքերում և մարտական պահպանությունում գտնվողների շրջանում: Գումարտակի ստորաբաժանումները սկսեցին անկանոն նահանջել դեպի արևելք, աստիճանաբար սպաներին հաջողվում է կարգուկանոն հաստատել և արդեն կարգով նահանջել: Մեր կորուստները զգալի էին. 220 զինվոր և 70 սպա զոհվել և վիրավորվել էին:

Սպանվածներն ու ծանր վիրավորներն, իհարկե, տեղում էին մնացել: Հակառակորդը, Դոկուչակի ջոկատը մեկուսացնելով, իր ուժերը տեղափոխեց Թորթոնի կիրճը՝ նպատակ ունենալով օգնության հասնել [յուրայինների] Կոփյան ջոկատին: Թուրքական այդ ջոկա-

42 Աբաշկին Պյոտր Ստեփանի (1868-1934), գեներալ-մայոր (08.09.1919), Սպիտակ շարժման մասնակից, ստալինյան բռնությունների զոհ:

43 Լիզ:

տի առաջխաղացումը կասեցվեց Փիրան քյոյ գյուղի մոտ իմ ջոկատի կողմից և շուտով՝ Կոփ քաղաքի անկումից հետո:

Պատկեցի՝ ծածկվելով այծենակաճով⁴⁴, և հրամայեցի պորուչիկ Վլադովին կարևոր տեղեկություն լինելու դեպքում ինձ արթնացնել, սակայն որքան էլ փորձում էի, ես ոչ մի կերպ չէի կարողանում քնել և միայն ժամանակ առ ժամանակ ննջում էի: Չափազանց շատ փորձություն էի տարել այդ օրը, և նյարդերս լարված էին:

Գիշերը լսեցի, որ հեռախոսագիր են բերել, արթնացրին պորուչիկ Վլադովին և հանձնեցին նրան: Նա ընդունեց [հեռախոսագիրը] և կրկին պառկեց, ուստի ես ենթադրեցի, որ, հավանաբար, կարևոր բան [նորություն] չկա:

Զցանկացա լուսաբացին արթնացնել իմ շտաբայիններին, քանի որ գիտեի, թե որքան են հոգնել, միայն առավոտյան ժամը 6-ին որոշեցի արթնացնել պորուչիկ Վլադովին: Արթնացնելով նրան՝ ես խնդրեցի ինձ հանձնել գիշերը ստացված հեռախոսագիրը: Նա ինձ հանձնեց և, օ՛հ սարսափ, այն շատ կարևոր էր: Ինձ հրամայված էր իմ ջոկատով և պլաստունյան 4 գումարտակներով թողնելով 6-րդ գնդի մեկ գումարտակ և 66-րդ հրետ. բրիգադի 2 լեռն. թնդանոթ՝ առավոտյան շարժվել դեպի Թորթոն և ապա Նագիկ՝ թուրքական ջոկատի թիկունքը, որը գտնվում է գեներալ Շարպանտյեյի ջոկատի դիմաց, ապա առաջանալ դեպի ք. Մուշ:

Գեներալ Շարպանտյեյին հրամայված էր Ուրտափ և Դատվան գյուղերի մոտ տեղակայված գեներալ Տրուխինի ջոկատի հետ շարժվել Բիրթխա [Բահեշ], իսկ գեներալ Վորոպանովին՝ Բեյլաջիկի և Կոփ դաղի լեռնաշղթաներով [առաջանալ] դեպի Լիզ: Հանդիմանելով պորուչիկ Վլադովին անճշտապահության համար՝ անմիջապես կարգադրեցի, չսպասելով պլաստունների 3 գումարտակների գալուն, սկսել երթը: Առաջապահ նշանակվեց Կովկ. 6-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակ, 2 լեռն. թնդանոթ, նրանց հետևում էր մնացած ջոկատը (5-րդ հրաձգ. գնդի 1 գումարտակ, պլաստունյան 22-րդ գումարտակը, 6 լեռն. թնդանոթ և լաբինցիների 2 հարյուրյակ): 6-րդ հրաձգ. գնդի գումարտակին և 66-րդ հրետանային բրիգադի 2 լեռնային թնդանոթներին հրամայվեց գրավել Փիրան քյոյ գյուղը:

Այս ամենի պատճառով ջոկատի երթը ուշացավ մեկ ժամից ավելի: Ես շտաբի, կազակների մեկ հարյուրյակի և իմ շտաբի պահակախմբի (Վոլգյան 3-րդ կազ. գնդի 1 հարյուրյակ) հետ շարժվում էի առաջապահի և գլխավոր ուժերի միջև: Առաջապահը Թորթոնի կիրճը տանող ճանապարհով առաջանում էր առանց որևէ լուրջ խոչընդոտի՝ որևէ դիմադրության չհանդիպելով: Առաջապահի պետը չլուսավորեց⁴⁵ ճանապարհի աջ կողմից ողջ երկայնքով ձգվող Բեյլաջան դաղի լեռնաշղթան: Ներկա գտնվող սպաներն ինձ ողջ ժամանակ ասում էին, թե կարծես լեռնաշղթան գրավված է հակառակորդի կողմից: Ես դրան չէի կարող հավատալ, քանի որ առաջապահը հանգիստ առաջանում էր, և նրանից որևէ զեկույց չի եղել, բացի այդ՝ ոմանք, դաշտային հեռադիտակներով ուսումնասիրելով տեղանքը, ոչինչ չէին նկատել:

Մենք շարունակում էինք հանգիստ առաջանալ, սակայն երբ ճանապարհը մոտեցավ լեռնաշղթային, հակառակորդը լեռնաշղթայից անսպասելի արագահար կրակ բացեց: Իհարկե, մեր շարքերում իրարանցում սկսվեց, անմիջապես բոլորն անկախ իրենցից հետ նետվեցին: Այդ կրակից մեզ մոտ մի քանի ձի սպանվեց, և կազակներ վիրավորվեցին: Ե-

44 Յափնցի (ռուսերեն՝ бубка):

45 Այսինքն՝ չօգտագործեց տարածքը լուսավորող իրթիռ:

թե թուրքերը մեզ ավելի մոտիկ թողնեին, ապա դժվար թե մեզանից որևէ մեկը ողջ մնար:

Ես անմիջապես հրամայեցի գլխավոր ուժերին դուրս բերել հրետանին, դիրքեր գրավել և կրակ բացել հակառակորդի, ավելի ստույգ՝ այն տեղանքի վրա, որը զբաղեցնում էր հակառակորդը, քանի որ լեռնաշղթան պատված էր մանր թփուտներով, որի շնորհիվ նա [թշնամին] չէր երևում: Բացի այդ՝ գլխավոր ուժերից լեռնաշղթա ուղարկեցի երկու վաշտ, իսկ առաջապահին հրամայեցի չառաջանալ:

Մոտ մեկ ժամ մեր հրետանին կրակում էր հակառակորդի վրա, և մեզ թվում էր, որ արկերը նպատակակետին են հասնում: Մենք ենթադրում էինք, որ հրետանին ստիպեց հակառակորդին նահանջել, սակայն տեղանքի զննումից հետո պարզվեց, որ նա [հրետանին] զգալի կորուստ չի պատճառել: Հակառակորդին հարկադրել է նահանջել առաջապահն իր շարժումով, որը հակառակորդի թիկունքից ավելի բարձր էր առաջացել, ինչպես նաև լեռնաշղթայով ուղարկված երկու վաշտերը: Հակառակորդը սկսեց արագ նահանջել Բեյլաջան դաղի լեռնաշղթայով: Պարզվեց, որ այդ դիրքը մի ամբողջ թաբուր էր զբաղեցրել: Այսպիսով, մեր ջոկատի առաջխաղացումը նորից մեկ ժամով ուշացավ:

Ջոկատով գալով Թորթոն գյուղը՝ ես իմ [ջոկատը] համալրեցի իմ ձախ ջոկատով (Կովկ. 5-րդ հրաձգ. գնդի 2 գումարտակ, 4 լեռնային թեղանոթ և Սևերսկյան դրագունյան գունդը): Այս ջոկատը ես ուղարկեցի Նազիկ գյուղը (Նազիկ գյուղ լճից հարավ-արևմուտք): Արդեն մթնում էր: Հակառակորդը դիրքավորված էր Նազիկ գյուղի մոտ՝ գետակից այն կողմ: Ցանկանալով իմաց տալ գեներալ Շարպանտյեյի ջոկատին իմ ժամանման մասին՝ ես հրամայեցի թեղանոթից մի քանի անգամ կրակ բացել, բացի այդ՝ ես նրան սպայական հեծելապարեկի հետ լուր ուղարկեցի:

Ես ցանկանում էի իմ ջոկատը գիշերակացի տեղավորել Նազիկ գյուղ լճի և Բեյլաջան լեռան միջև ընկած սարահարթի վրա, սակայն մոտակայքում ջրի բացակայությունը, զորքի ուժեղ հոգնածությունը և զորամասերի պետերի խնդրանքներն ինձ հարկադրեցին գլխավոր ուժերը տեղակայել սարահարթ չհասած՝ կիրճ տանող ճանապարհի երկայնքով, այն հերթականությամբ, որով շարժվում էին:

Բեյլաջան լեռից ինձ երևում էր, թե ինչպես է հակառակորդը նահանջում [գյուղ] Լիզից հարավ-արևմուտք, և ինչպես էր մեր հեծելազորը ([հրամանատար] գեներալ Իսարով⁴⁶) նրան հետապնդում: Ցանկանալով նրան օգնել՝ ես հրամայեցի Սևերսկյան դրագունյան գնդին հակառակորդի [նահանջի] ճամփան կտրել, սակայն այդ գործողությունը հաջողություն չունեցավ տեղանքի խիստ կտրուվածության, մթության վրա հասնելու և ամենագլխավորը՝ գնդի հրամանատարի եռանդի բացակայության պատճառով:

Ես հրամայեցի ինձ մոտ մարտական պահպանության նշանակել Կովկ. 6-րդ հրաձգային գնդի գումարտակին, իսկ Կովկ. 5-րդ հրաձգ. գնդին՝ դիրքավորվել Նազիկ գյուղից հյուսիս գտնվող լեռնանցքում, Լաբինսկյան կազակ. գունդը հրամանատարի խնդրանքով թույլատրեցի մնալ սարահարթում, քանի որ կար լավ արոտավայր, և ջրի հեռու լինելը նրանց նեղություն չէր պատճառում:

Անհաջող հետապնդումից վերադարձած Սևերսկյան դրագունյան գունդը ես տեղավորեցի Թորթոն գյուղի մոտ, անձամբ համոզվեցի, որ մարտական պահպանությունը կարգված է, որից հետո վերադարձա գլխավոր ուժերի մոտ:

46 Իսարով Իոսիֆ Լուկայի (1862-?), գեներալ-մայոր, Կովկասյան հեծելազորային դիվիզիայի 2-րդ բրիգադի հրամանատար:

Ես ապշած էի այն քառսից, որ հանդիպեցի գլխավոր ուժերի գիշերակացում: Չորամասերը միմյանց հետ խառնվել էին և շերտ ընդ մեջ բանակել էին մեր բեռնակիր կենդանիների հետ: Ինձ զսպելով՝ ես ամեն ինչ թողեցի անփոփոխ՝ լավ իմանալով, որ մարտական պահպանությունը հիմնավոր կերպով կարգված է, և բացի այդ՝ չէի ցանկանում անհանգստացնել նախորդ մարտերից խիստ հոգնած մարդկանց:

Գիշերը շատ մութ էր: Իմ երթային վրանի մոտ նոր էի իջել ծիուց, երբ վիրակապման ջոկատի բժիշկներն ինձ և իմ շտաբի պետին հրավիրեցին իրենց մոտ թեյելու: Վիրակապման ջոկատը գիշերակացի էր գտնվում զորամասերից ոչ հեռու: Քանի որ բոլոր կարգադրություններն արված էին, մենք ընդունեցինք հրավերը: Նստեցինք սեղանի շուրջ ու սկսեցինք թեյել ու զրուցել: Որոշ ժամանակ անց հանկարծ լսվեցին մի քանի առանձին-առանձին հրացանային կրակոցներ, ինչին անմիջապես հետևեց դժոխային հրացանային կրակ, և մարդկանց մեծ խմբեր՝ առանց հագուստի և հանդերձանքի, սկսեցին հապշտապ հեռանալ դեպի Թորթոն: Ես սկզբնապես ապշել էի այդ իրավիճակից և ենթադրեցի, որ թուրքերը, ծածուկ մոտենալով, գրավել են գերիշխող բարձունքները և կրակ բացել, սկսեցին մտածեցի, որ ջոկատը ոչնչացվել է, սակայն նկատելով, որ լեռներից կրակոցներ չկան, գլխի ընկա, որ դա կեղծ տագնապ է, որի պատճառը մերոնք են: Ես անմիջապես կանգնեցի Թորթոն տանող ճանապարհին ու գոռացի. «Դադարեցնել հրաձգությունը, իսկ հեռացողներին կանգնեցնել ու վերադարձնել»: Մարդիկ սկսեցին վերադառնալ, սակայն, վստահ չլինելով, որ հակառակորդ չկա, մեկը մյուսին դիմելով՝ աւում էին. «Դե ինչ, հետ գնանք, մեր գեներալի հետ միասին ենք զոհվելու»:

Պարզվեց, որ շտաբին առընթեր գտնվող հարյուրյակը, խուճապի մատնվելով, փախել էր Թորթոն, որտեղ Սևերսկյան գնդի հրամանատարին հայտնել էին, որ ես և իմ ջոկատը զոհվել ենք: Գունդը որոշ ժամանակ անց վարձով հասավ գիշերակացի վայրին: Երբ հրաձգությունը դադարեց, և մարդիկ փոքր-ինչ հանգստացան, ես կանչեցի զորամասերի հրամանատարներին, որպեսզի իմանամ խուճապի պատճառը, սակայն, ցավոք, չկարողացա ինչ-որ բանի հասնել:

Պլաստունյան գումարտակի հրամանատար, զորային ավագ Բլոխինը կտրականապես պնդում էր, որ իր պլաստունները չեն մասնակցել խուճապին, և երբ դա սկսվել է, իր պլաստունները շրջապատել են իրեն և իբր ասել են. որ «մենք թույլ չենք տա, որ Դուք զոհվեք»:

Ես հրամայեցի ստուգել զենքերը, որպեսզի համոզվենք, թե ով է կրակել: Շտաբ սպային նշանակեցի հետաքննություն կատարելու համար: Այս խուճապից որոշ ժամանակ անց առաջապահ ջոկատից եկավ Լաբինսկյան կազմ. գնդի հրամանատար, գնդապետ Նոսկովը և ինձ զեկուցեց, որ մի ժամ առաջ սրարշավ, անթամբ ծիու վրա նստած, միայն ստիպակեղենով եկավ պլաստունյան գումարտակի սպան (հետագայում պարզվեց, որ դա 22-րդ պլաստունյան գումարտակի գումարտակային համհարզն էր) և հուզված վիճակում իրեն հայտնեց, որ գեներալ Նազարբեկովը և ողջ ջոկատը զոհվել են, ուստի առաջարկում էր՝ ով կարող է, թող փրկվի: Նա ցանկանում էր գնալ առաջապահ պահակետները, սակայն Նոսկովը նրան արգելեց, և երբ նա հանգստացավ, հետ ուղարկեց իր զորամասը: Այս դեպքի վերաբերյալ ես ոչինչ չասացի զորային ավագ Բլոխինին, քանի որ լավ գիտեի, որ նա հետագայում կիմանա: Որոշ ժամանակ անց հետաքննություն իրականացնողը զեկուցեց խուճապի պատճառի մասին: Մարդիկ հիմնականում չէին քնել վրաններում, նույն տեղում գտնվող ուղտերը ինչ-որ բանից վախեցած այս ու այն կողմ նետվեցին և գցեցին հրացաններից կազմած բուրգերը: Մի քանի հոգի արթնացան և քնաթաթախ կարծեցին, որ հակառակորդը հարձակվել է և հրացաններից կրակ բացեցին: Հրաձգությունից արթնացածները, ենթադրելով, որ թուրքերը հարձակվել են, նույնպես սկսեցին կրակել իրենց հրացաններից:

Հուլիսի 4-ի լույս 5-ի գիշերը Կովկ. հրաձգ. գնդի հրամանատարի նախաձեռնությամբ, ավելի ստույգ՝ մարտական պահպանությունը անցնելով հարձակման և սվինամարտի բռնվելով՝ գրավեցին հակառակորդի դիրքը՝ գերելով մի քանի ասկյարների: Հակառակորդը արագ լքեց դիրքերը և սկսեց նահանջել դեպի հարավ և արևմուտք: Հուլիսի 5-ի առավոտյան ջոկատը շարունակեց հարձակումը դեպի Նագիկ և Մեծք գյուղերը՝ առաջ ուղարկելով որպես առաջապահ Լաբինսկյան կազ. գունդը և 5-րդ հրաձգ. գնդի գումարտակները: Առաջապահն ուղարկվեց Թափավանք գյուղը: Երբ առավոտյան ես գլխավոր ուժերի հետ մոտեցա իմ նախկին մարտական պահպանության վայրին, այդ պահպանության պետը՝ կապիտան Պլատոնովը, զեկույցով մոտեցավ և հայտնեց, որ գիշերը վազելով իր մոտ էին եկել երկու պլաստուններ և հայտնել գեներալ Նագարբեկովի և նրա ջոկատի կործանման մասին: Ես հրամայեցի նրանց կալանել: Մոտակայքում գտնվում էր զոր[ային] ավագ Բլոխինը, և ես դիմեցի նրան. «Դուք երեկ երաշխավորում էիք ձեր պլաստունների համար, լսե՞ք կապիտան Պլատոնովին»: Պլատոնովը նույնը պատմեց նրան: Ես հարցրեցի Պլատոնովին. «Իսկ որտե՞ղ են այդ պլաստունները»: Նա զեկույցեց, որ ուղարկել է իրենց զորամասը, որին զորային ավագ Բլոխինը ասաց. «Չեմ կարծում, որ նրանք պլաստուններ են»: Այդ նույն ժամանակ ինձ մոտեցան մարտական պահպանության զինվորները՝ բերելով երկու պլաստուններին, որոնց ես հանձնեցի Բլոխինին: Նա խիստ շփոթված էր, և ես նրան ոչինչ չսասացի:

Հուլիսի 4-ին ես այդպես էլ չկարողացա կապվել գեներալ Շարպանտյեյի ջոկատի հետ, և միայն հուլիսի 5-ին, երբ ջոկատով մոտեցանք Մեծք գյուղին, ինձ մոտ կապի համար ժամանեց նրա [գեներալ Շարպանտյեյի] ջոկատի Նիժեգորոյյան դրագունյան գնդի սպան: Ստիպված էինք Մեծքում բանակել, քանի որ տեղ չէին հասել պլաստունյան երեք գումարտակները: Նրանք մոտեցան միայն հուլիսի 6-ին:

[Հուլիսի] 5-ին առաջապահը գտնվում էր Թափավանք գյուղում (գյուղը գտնվում է Նեմրուֆ դաղ լեռան հյուսիսային ստորոտին), իսկ կազակները ուղղվեցին Մշո դաշտի ուղղությամբ: Այդ օրը կազակները գերեցին մոտ 500 ասկյարների, որոնց հարցաքննությունից հետո ուղարկեցին Մանազկետր՝ կորպուսի շտաբ: Ճանապարհին հանդիպող բոլոր գյուղերը ամառի էին, կային մի քանի բնակիչներ և Փուրխուս գյուղ ուղղվող զգալի թվով փախստականներ: Ցանկանում էի փախստականներից վերցնել [որդեգրել] մի տղայի, որին բերեց իմ հայ զինվորական սպասավոր Գալուստը: Նա [տղան] 12-ից 13 տարեկան էր, սակայն հաջորդ օրը ինձնից թույլվություն խնդրեց վերադառնալ՝ ծնողներին փնտրելու նպատակով, իսկ եթե նրանց ողջ չգտնի՝ թուրքերից վրեժխնդիր լինելու համար: Ցավոք, իմ բոլոր հորդորները արդյունք չունեցան, և ստիպված նրան թույլատրեցի՝ տալով փող և հաց:

Հուլիսի 7-ին ես շարունակում էի իմ ջոկատի հետ հարձակվել դեպի Թափավանք, ապա դեպի Կաներաշ⁴⁷ (Թափավանքից հարավ՝ 10 վերստ): Կաներաշը գտնվում էր Մշո դաշտ տանող զառիվայրին: Թիկունքի պահպանության և Կոփի ջոկատի հետ կապ պահպանելու համար Նագիկի մոտ գտնվող լեռնանցք ուղարկվեց պլաստունյան 20-րդ գումարտակը, որին հրամայվեց պաշտպանել լեռնանցքը, եթե հակառակորդը փորձի այն արևմուտքից գրավել: Կանարեշ գյուղը տանող զառիվայրը դժվարանցանելի էր: Ճանապարհը քարքարոտ էր, գրեթե նման չէր ճանապարհի: Ջոկատի առաջացմանը նմանապես խոչընդոտում էին կաղնու մանր թփերը: Նեմրուֆի այս լանջը ամբողջությամբ պատված էր այդպիսի թփերով, և հակառակորդը կարող էր հեշտությամբ թաքնվել այդ թփուտներում ու դարաններ կազմակերպել: Գյուղն առանց բնակիչների էր: Մարդկանց ու կենդանիների

47 Կաներաշ:

մեծ թվով դիակներից սարսափելի գարշահոտություն էր տարածված: Ստիպված էինք այդ բոլորը թաղել, որպեսզի կարողանայինք բանակել: Ստիպված էինք տեղակայվել գյուղի մոտ, քանի որ ջուր կար միայն գյուղում: Մինչ ջրկատը տեղավորվում էր, ես մի սպայի ու մի քանի հանձնակատարների հետ շարժվեցի Վարդենիս գյուղի ուղղությամբ՝ ցանկանալով հասնել մինչև կազակների առաջապահ զորամասերը: Ցավոք, դա ինձ չհաջողվեց, չնայած մենք երկար ժամանակ առաջացանք, պարզվեց, որ Լաբինսկյան կազակ գունդը ոչ թե Կանարեշ էր գնացել, այլ ուրիշ գյուղ, որը գտնվում էր իմ ճանապարհից աջ: Ես տեսա, թե ինչքան շատ գյուղեր էին այրվում այդ հովտում: Որոշ ժամանակ անց ես լսեցի մեզ կանչող ձայներ: Պարզվեց, որ դա իմ շտաբի սպան էր կազակների հետ, որոնց ուղարկել էր իմ շտաբի պետը: Նա անհանգստացել էր իմ երկարատև բացակայությունից և նրանց ուղարկել էր ինձ փնտրելու համար: Կանարեշ վերադարձա շատ ուշ: Իմ բացակայության ժամանակ կարգադրություն էր ստացվել ուղարկել Սևերսկյան դրագունյան գունդը գեներալ Շարպանտյեյի ջոկատը: Ես կանչեցի գնդի հրամանատարին և հանձնեցի կորպուսի հրամանատարի հրամանը, և քանի որ մենք այդ ջոկատի հետ կապվելու հնարավորություն չունեինք, ես նրան [գնդի հրամանատարին] հայտնեցի, որ ջոկատը պետք է գտնվի Նեմրուֆ դաղի հարավարևելյան զառիվայրի վրա՝ Վանա լճի մոտ⁴⁸:

Հաջորդը օրը ցերեկակաց էր: Մեզ սկսեցին տագնապալի լուրեր հասնել, որ թուրքերին մեծ համալրում է մոտեցել, և Կոփի ու Մանազկերտի շրջանում իրավիճակն անբարենպաստ ընթացք է ստանում:

Հուլիսի 8-ին ես նահանջելու հրաման ստացա: Հավանաբար համանման հրաման էր ստացել նաև գեներալ Շարպանտյեյն: Կանարեշում գտնվելու ողջ ընթացքում որքան էլ որ ես փորձեցի կապ հաստատել Շարպանտյեյի ջոկատի հետ, այդպես էլ չհաջողվեց, ինչպես նաև ես չիմացա, թե Սևերսկյան գունդը հասա՞վ նրան [գեներալ Շարպանտյեյին], թե՛ ոչ:

Հուլիսի 9-ին ես Կանարեշից ճանապարհվեցի դեպի Թափավանք գյուղը. ամեն կողմից իմ հեծելազորից տագնապալի լուրեր էի ստանում: Մշո դաշտից Լաբինսկյան [կազակային] գնդի հրամանատարը հաղորդում էր 12 թաբուրների մասին. Կարուր դաղից շարժվում է 6 թաբուր և Նազիկի կողմից՝ նույնպես 6 թաբուր⁴⁹:

Ջոկատը բանակեցի Թափավանքում, հավաքեցի [խորհրդակցության] զորամասերի պետերին և իմ շտաբի պետին, ցանկանում էի իմանալ նրանց կարծիքը, թե ինչ անել: Ցավոք, նրանցից ոչ ոք կարծիք չհայտնեց, ուստի ես որոշեցի Կարուր դաղի լեռնաճյուղավորումում դիրքեր գրավել և սպասել հակառակորդին: 5-րդ հրաձգ. գնդի մեկ գումարտակը հեծելազորի հետ ուղարկեցի դեպի Մեծք գյուղը որպես առաջապահ զորամաս: Այդ գումարտակին հրամայեցի հեծելազորի օգնությամբ կապվել Նազիկ գյուղի մոտ գտնվող լեռնանցքում իմ կողմից թողնված այլաստունյան գումարտակի հետ:

Մինչև երեկո ես մնացի դիրքերում՝ սպասելով հակառակորդին, իսկ մուգն ընկնելուց հետո ինձ հետ ունենալով Մշո դաշտից փախստականների մեծ զանգված՝ որոշեցի նահանջել դեպի Փուրխուս գյուղը: Շատ զինվորներ, չնայած հոգնածությամբ, իրենց ուսերի վրա էին տանում փախստականների երեխաներին: Թափավանքում ես ականատես եղա հետևյալ տեսարանին. մի անտուք հայ խնդրում էր զինվորներին փրկել իր կրտսեր եղբայրներին⁵⁰:

48 Գեներալ Թ. Նազարբեկյանի շտաբի պետ, գնդապետ Պոլտավցկի վկայությամբ առաջանում էին «տագնապած սրտով», Տեն Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 174:

49 Գեներալ Նազարբեկյանին նահանջի դրդելու համար Լաբինսկյան կազակային գնդի հրամանատար, Գլխավոր շտաբի սպա Նոսկովի հրահանգով կազմված այս կեղծ գեկույցի մասին տե՛ս հաջորդ էջում:

50 Գեներալ Ե. Մասլովսկին իր ուսումնասիրությունում ամբաստանում է հայ փախստականներին, թե իբր նրանց պատճառով հնարավոր չեղավ կանգնեցնել Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի զորամասերի նահանջը Կիլչ Գյաղուկ լեռնանցքում, տեն Масловский Е. В., նշվ. աշխ., էջ 176-177-ի ծանոթագրությունը:

Հայ զինվորները հաճույքով նրան վերցրին, ցանկանում էին նստեցնել փամփուշտ տեղափոխող երկանիվ սայլակին, սակայն նա կտրականապես հրաժարվեց նրանց հետ գնալ՝ ասելով, որ ինքը որոշել է մեռնել իր տանը:

Փուրխուս գյուղ ջոկատը հասավ գիշերը՝ մոտ ժամը 2-ին, չափազանց ուժասպառ եղած: Մեկ օրվա ընթացքում հուլիսյան տապի պայմաններում զորքը մոտ 50 վերստ էր անցել:

Երբ ես Թափավանքում դիրքեր էի գրավում, երեկոյան լեռան կատարին հեծելագործ նկատեցի: Այդ հանգամանքն ինձ խիստ զարմացրեց: Սկզբնապես ես ենթադրեցի, որ դա հակառակորդն է, և զարմացա, թե ինչպես էր նա կարողացել հայտնվել թևում և նույնիսկ փոքր-ինչ թիկունքում, սակայն ավելի ուշադիր դիտելուց հետո ես համոզվեցի, որ դա Սևերսկյան դրագունական գունդն է: Պարզվեց, որ նա երկու օր թափառել էր Նեմրուֆի մոտ և չէր գտել գեներալ Շարպանտյեյի ջոկատը: Իհարկե, դրա պատճառը գնդի հրամանատարի անփութությունն ու անվճռականությունն էր: Գեներալ Շարպանտյեյի ջոկատը ինձնից ամենաշատը 25-ից 30 վերստի վրա էր գտնվում: Բավական էր, որ նա [Սևերսկյան գնդի հրամանատարը] հեծյալ պարեկախումբ ուղարկեր Նեմրուֆ, որտեղից նա միշտ կարող էր տեսնել գեներալ Շարպանտյեյի ջոկատը, քանի որ այդտեղից տեսանելի էին Վանա լճի արևմտյան ծայրամասի ողջ տեղանքը և ողջ Մշո դաշտը: Նա իր գնդով ուղղվեց Ախլաթ քաղաքը, քանի որ ենթադրում էր, որ գեներալ Շարպանտյեյն այնտեղ կնահանջի:

Ջոկատի շտաբի հետ կապի համար գործուղվել էր Լաբինսկյան Կազ. գնդի խորունժին (ազգանունը չեմ հիշում)⁵¹: Նա հետո պատմել էր իմ շտաբի սպաներին, որ երբ Մշո դաշտից Լաբինսկյան գնդի հրամանատարը հուլիսի 9-ին ինձ համար զեկուցագիր էր կազմում հակառակորդի մասին, նա դիմել էր սպաներին ու ասել, որ անհրաժեշտ է ստիպել գեներալ Նազարբեկովին նահանջել: Հարցրել էր, թե քանի թռչուն կա ծառի վրա: Ինչ-որ մեկը հաշվել էր և ասել՝ 12: Դե այդպես էլ զեկուցեք, որ Մշո դաշտից հարձակվում են 12 թաբուրներ: Իհարկե, նման զեկուցագրերով ջոկատի պետը միշտ էլ կարող էր թերագնահատել⁵² հակառակորդին: Եվ ընդհանրապես, իմ կողմից ես գլխավորապես նկատել էի, որ տարբեր պատճառաբանություններով ձգտում էին խուսափել մարտական գործողություններին մասնակցելուց: Իմիջիպալոց, Լաբինսկյան կազակային գնդի հրամանատարը Գլխավոր շտաբի սպա էր ու հետագայում բավականին բարձր պաշտոն էր զբաղեցնում:

Ֆոնա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 1-49: Բնագիր: Ձեռագիր

Ռուբեն Օ. Սահակյան – գիտական հետաքրքրություններն են՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը, կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը, հայ ոստիկանության պատմությունը:

51 Կրտսեր սպայական կոչում կազակային զորքերում, որը հավասարագոր է ժամանակակից բանակի լեյտենանտի կոչմանը:

52 Այստեղ նկատվում է որոշակի հեգնանք, քանի որ խոսքը գերագնատելու մասին է: Հավաստիության համար ներկայացնում ենք վերջին պարբերության բնագիրը: Был прикомандирован для связи к штабу отряда хорунжий (фамилию не помню) Лабинского каз[ачьего] полка. Он после рассказывал офицерам моего штаба, что когда из Мушской долины 9-го июля делал донесение мне командир Лабинского полка о противнике, то он обратился к офицерам и сказал, нужно заставить отступить генерала Назарбекова. Спросил, сколько птичек на дереве. Кто-то сосчитал и сказал 12. Ну, так донесите, что с Мушской долины наступают 12 таборов. Конечно, при таких донесениях начальник отряда всегда мог недооценить противника. Вообще мною большею частью замечалось уклонение от каких-либо боевых действий под самыми различными предлогами. Командир Лабинского полка между тем был офицер Генерального штаба и после занимал довольно высокий пост.

THE UNPUBLISHED MEMOIRS OF TOVMAS NAZARBEKYAN

The military actions in the Caucasus front since July,
1914 up to 1916 April 26
Copy- book 3: since June 10, 1915 up to July 10

Ruben O. Sahakyan

Key words – Tovmas Nazarbekyan, N. Yudenich, doctor Ter-Tovmasyan, Aram Manukyan, Paruyr, Narekavank, Andranik, Dro, Hamazasp, Qeri, Van, Kop.

In the 3rd copy- book of his memoirs general Nazarbekyan describes the military actions that took place since June 10, 1915 up to July 10. In May 1915 the Russian command decided to attack and occupy the main centres of supply of the Ottoman army – Erzurum and Trabzon. For that purpose, it started to transfer military units from Persia to Western Armenia: those units included the 2nd Caucasus Rifle Division of T. Nazarbekyan. On his way the General witnesses the crimes committed by Djevdet bey and his scoundrels – villages full of numerous corpses of killed Armenians. T. Nazarbekyan together with his brigade settles in the outskirts of Van. The commander makes short visit to Van. He states with regret that he had no success in meeting the governor of Van Aram Manukyan but mentions his meeting with a number of Armenia figures of Van's Armenian Governance among whom were Paruyr Levonyan and Vicar of the Diocese Archimandrite Yeznik Nerkararyan.

In late June and early July, 1915 T. Nazarbekyan carries out the operation of Kop and entirely crushes the enemy. The commander was complaining of the supply service who being unable to organize the regular supply of the army was in some cases hampering the rapid transmission as the army had to wait for the suppliers to bring food.

The victory gave an opportunity to head for Mush, but on July 8 T. Nazarbekyan got the order to retreat. Alongside with the military units the population also left their homes. The general describes with pain the migration of women and children who were deprived of any means of transport. Many of the soldiers were carrying the children on their shoulders. T. Nazarbekyan once more states that the story of retreat of December, 1914 was repeated, and he again witnessed the torturous and suffering escape of the peaceful population. As it later turned out the cause for the retreat of T. Nazarbekyan's the 2nd Caucasus Rifle Brigade's military units was the false report of the commander of Labinsky Kazak regiment.

The retreat of the Russian troops had disastrous effect for the Armenians of Van-Vasporakan who had to migrate to Eastern Armenia. And on the same days from the high mountains bordering the field of Mush the fires of burning villages were seen. The

intentional retreat of Russian army in July 1915 resulted in the expulsion of Armenians of Van-Vaspurakan and the genocide of Armenians of Taron. Before the eyes of general T. Nazarbekyan the spine of Wes Armenia was broken.

Резюме

НЕИЗДААННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте с июля 1914 г. по 26 апреля 1916 г.

Тетрадь 3. С 10-го июня по 10 июля 1915 г.

Рубен О. Саакян

Ключевые слова - Товмас Назарбекян, Н. Юденич, врач Тер-Товмасын, Арам Манукян, Нарекский монастырь, Андраник, Дро, Амазасп, Кери, Ван, Муш, Коп.

В 3-й тетради своих воспоминаний генерал Назарбекян описывает военные действия, происшедшие с 10-го июня по 10 июля 1915 г. В мае 1915 г. русское командование приняло решение о наступлении для захвата главных центров обеспечения османской армии - Эрзрума и Трапезунда. С этой целью оно начинает переводить из Персии в Западную Армению воинские подразделения, в числе которых была 2-я Кавказская стрелковая дивизия Т. Назарбекяна. По дороге генерал становится очевидцем злодеяний, совершенных Джевдет-беем и его курдскими мерзавцами – сожженных деревень, полных тел убитых армян. Т. Назарбекян со своей бригадой разбивает лагерь в окрестностях Вана. Полководец совершает кратковременный визит в Ван. Он с сожалением отмечает, что ему не удалось встретиться с губернатором Вана Арамом Манукяном, но упоминает о встрече с некоторыми армянскими деятелями Ванского армянского губернаторства, в числе которых были Паруйр Левонян, генеральный викарий епархии Езник архимандрит Неркарарян.

Полководец жаловался на интендантскую службу армии, которая, не сумев организовать регулярное снабжение воинского подразделения, в ряде случаев не давала возможности быстро передвигаться; вместо этого надо было ждать, пока интенданты довезут провиант.

В конце июня и начале июля 1915 г. Т. Назарбекян осуществляет Копскую операцию, полностью разгромив противника. Победа давала возможность продвинуться к Мушу, однако 8-го июля Т. Назарбекян получает приказ об отступлении. Вместе с воинским подразделением из населенных пунктов уходили так-

же их жители. Генерал с болью описывает переселение женщин и детей, лишенных транспортных средств. Многие из солдат несли детей на своих плечах. Т. Назарбемян еще раз подтверждает, что повторилась история декабрьского отступления 1914 г., и он вновь стал очевидцем томительного и мучительного бегства гражданского населения. Как выяснилось позже, причиной отступления 2-й Кавказской стрелковой бригады послужил ложный рапорт командира Лабинского казачьего полка - с целью заставить Т. Назарбеяна отказаться от наступления в направлении Муша.

Отступление русских войск имело катастрофические последствия для армян Вана-Васпуракана, которые были вынуждены переселиться в Восточную Армению. А в те же дни с высоких гор, граничащих с долиной Муша, ночами были видны огни подожженных деревень Мушской долины. Результатом преднамеренного отступления русской армии в июле 1915 г. стало изгнание армян из Вана-Васпуракана и геноцид армян Тарона. На глазах генерала Т. Назарбеяна ломался хребет Западной Армении.

REFERENCES

1. **Ajrapetov O. R.**, Ne ochen' kratkaja istorija...N. Stone, World War One. A Short History, Penguin Group, 2007, "Russkij sbornik". Issledovanija po istorii Rossii, M., 2012, tom XI, s. 491-513 (**In Russian**).
2. **Elisejev F. I.**, Kazaki na Kavkazskom fronte (1914-1917), M., 2001 http://militera.lib.ru/memo/russian/eliseev_fi/02.htm (mutq` 15.07.2019) (**In Russian**).
3. **Falkengayn Erix fon**, Verhovnoe komadovanije 1914-1916 vэ ego vaznejshix reshenijax. Perevod sэ nemeckogo A. E. Sneseva, M., 1923, s. 56 (**In Russian**).
4. **Korsun N. G.**, Aklashkertskaia I Xamadanskaia operacii na Kavkazskom fronte mirovoj vojni, M., 1940, eg 28 (**In Russian**).
5. **Korsun N. G.**, Pervaja mirovaja vojna na Kavkazskom fronte, operativno-strategicheskij ocherk, M., 1946 (**In Russian**).